XXV

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՄԱՆՐ ՀԱՏՎԱԾՆԵՐ

Այստեղ ներկայացվում են ժամանակագրական այն մանր բնագրերը և հատուկտորները, որոնք դրի են առել մեծ մասամբ ղեպքերին ժամանակակից, հաճախ էլ ականատես անձնավորություններ։ Առանձին բնագրերում պատահած բազմակետերը պատկանում են նախորդ հրատարակիչներին կամ ձեռագրերի ցուցակ կազմողներին (անտիպ)։

Ստորև տալիս ենք ժամանակագրական այդ հատուկտորների մասին համառոտ տեղեկություններ։

Ա. Մատենադարանի արխիվի Տիրայր վարդապետի ֆոնդի № 119 թղթապանակը Օքսֆորդի Բոդլեյան գրատան հայերեն ձեռագրերի ցուցակն է, որի ձեռագրերից մեկը, ինչպես հաղորդում է Տիրայր վարդապետը—«է հաւաքածու զանազան նիւթերի, որի մեջ մտնում են վարքագրութիւն, ծիսարան, աշխարհագրական, քերականական մասեր... տարեգրութիւն, տաղեր» (վավ. 1գ, էջ 265)։ Այս թղթապանակի 1գ տետրի 270 և 271 էջերում ընդօրինակված է Հեթումյան թագավորական և Լամբրոնյան իշխանական տների XIII դարի մի քանի ներկայացուցիչների մահվան ժամանակագրական ցանկը։ Այս տեղեկությունները, որոնք հետագայում մուծվել են հեղինակի կազմած տարեգրության բնագրում (Մժ, 1, էջ 74—87), թողել է Հեթում Բ-ն իր սեփականությունը հանդիսացող Սաղմոսարանի էջերից մեկում։

Բ. Վերևում նշված թղթապանակի (Ա) մի այլ, 1դ տետրի 239ա—290ա էջերում բերված է ժամանակագրական մի այլ հատված, որը վերաբերում է Հուլավուին և նրա հաջորդներին։ Իսկ միևնույն տետրի 292ա էջում գտնվում է ժամանակագրական մի ուրիշ, բավական մանր բնագիր։

Գ. ՄՏՄԾ-ի № 33 թղթապանակի 153-րդ էջում գտնվում է Երուսաղեմի № 2341 ձեռագրի (ժամանակ՝ 1278 թ.) նկարագրությունը։ Ցուցակի կազմող Մ. Տեր-Մովսիսյանը գրում է, որ «Ձեռագրիս մեջ կան երկու էջ տարեգրական տեղեկություններ» և ապա բերում ստորև հրատարակվող բնագիրը։ Ըստ երևույթին մեկ ուրիշը ձեռագրի դատարկ էջերում ավելացրել է այս վկայությունները, որոնք վերաբերում են XIII դարի երկրորդ կեսին և XIV դարի սկզբներին։ Եղելությունների վայրը հանդիսացել է Կիլիկիան։ Բնագրում առկա են բազմաթիվ սխալներ։ Մ. Տեր-Մովսիսյանը այդ առթիվ գրում է. «Արտագրողի անհոգությունից, բավական բառեր մնում են անհասկանալի» (թղթապանակ № 33, էջ 153)։ Մեզ հետաքրքրող ժամանակագրությունը այստեղ բերվածով չի վերջանում. Մ. Տեր-Մովսիսյանը դարձյալ գրում է. «Նման տեղեկություններ, կցկտուր շարադրված են մի

էջ ևս. ով է գրողը, մնում է անհայտ» (նույն տեղում, էջ 153)։ Հենց այդ վիճակով էլ ընագիրը բերում ենք այստեղ։

Դ. Մատենադարանի № 3613 ձեռագրի 71ա էջում պահվել են XIV դարին վերաբերող մի քանի տեղեկություններ, որոնք ամենայն հավանականությամբ չեն պատկանում ձեռագրի գրիչ Մխիթար Անեցուն (էջ 26բ)։

Միևնույն ձեռագրի մագաղաթյա առաջին պահպանակի երկու էջերում[1] տարբեր անձնավորությունների կողմից արձանագրվել են ժամանակագրական առանձին տեղեկություններ, որոնք վերաբերում են XIII—XVI դարերին։

Ե. Մատենադարանի № 1382 ձեռագրի 306բ դատարկ էջում գտնվում են Թ. Մեծոփեցու կենսագիր Կիրակոս Բանասերի ինքնագիր մի քանի խիստ համառոտ վկայությունները, որոնք վերաբերում են XV դարի առաջին կեսին։

Զ. «Դիւան Հայոց պատմութեան» Ժ գրքի 17—18 էջերից վերցրել ենք Հովհաննես Կրոնավորի ժամանակագրությունը՝ XV դարի 40-ական թվերին վերաբերող։ Հրատարակիչ Գ. Աղանյանցն այս ընագրի մասին հաղորդում է, որ այն գտնվել է «Վանի ս. Նշան եկեղեցում պահված նրա գրած Ավետարանի սկզբում»[2]։ Ասել է, թե Գ. Աղայանցի հրատարակությունը քաղված է Հովհաննես Կրոնավորի ինքնագրից։

Է. Տիրայր վարդապետի կազմած Օքսֆորդի Բոդլեյան գրատան վերևում նշված հայերեն ձեռագրերի ցուցակից վերցրել ենք այս ընագիրը[3], որ վերաբերում է XV—XVI դարերին։

Ը. Մատենադարանի № 1518 ձեռագրի մի քանի էջերի[4] լուսանցքներում ժամանակակցի մեկը գրի է առել 1600 թ. վերաբերող այս մի քանի տեղեկությունները։

Թ. Այս ընագիրը հրատարակում ենք համաձայն «Դիւան»-ի[5]։ Գ. Աղայանցը սրա մասին ասում է, որ քաղված է «Ամասիա գտնված ձեռագիր երազահանից»[6]։ Հեղինակը, հավանաբար, XVI դարի վերջի և XVII դարի սկզբի անձնավորություն է։

Ժ. Պրոֆ. Լեոյի արխիվի[7] № 11 գործի 202 էջում գտնվում է այս ընագիրը հետևյալ վերնագրով. «Ժամանակագրութիւն կամ գաւազանագիրք աշխատասիրեալ յԱւետիքայ ումեմնէ»։ Ժամանակագրությունը հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Թուրքերի գերիշխանության տակ գտնվող հայերի վիճակի մասին։ Ընագրի երկրորդ մասը, որը վերաբերում է Ջալալիների ելույթներին, գտնում ենք ինչպես Մատենադարանի № 5959 ձեռագրում[8], այնպես էլ Ա. Դավրիժեցու պատմության մեջ[9]։ Վերջին երկու

---

1 Պահպանակի վրա նախապես գրված է լատիներեն, որի մի մասը խունացած է, իսկ մյուս մասը խնամքով մաքրված։

2 «Դիւան», գիրք Ժ, էջ 17—18։

3 Մատենադարան, արխիվ, ֆ. Տիրայր վարդապետ, թղթ. 119, վավ. 1գ, էջ 290ա—291ա։

4 էջ 272ա, 294բ, 299բ, 314բ։

5 Գիրք Ժ, էջ 101—102։

6 Նույն տեղում, էջ 101—102։

7 Գտնվում է Հայկակ.ն ՍՍՌ Գիտ. ակադեմիայի Պատմության ինստիտուտի արխիվում։

8 էջ 95ա—102ա։

9 էջ 86—87։

բնագիրը համեմատեցինք առաջարկվող ժամանակագրության հետ և նկատեցինք զգալի շեղումներ, իսկ սովի պատմությունը սույն բնագրում հիշվում է առանց մանրամասնությունների։ Ամենայն հավանականությամբ այս ժամանակագրությունը առանձին բնագիր է և կապ չունի Ա. Դավրիժեցու մեջբերածի հետ։

ԺԱ. «Դիւան»-ից[1] քաղված այս բնագիրը հրատարակիչը վերագրել է Գրիգոր Կամախեցուն և նշել, որ Վարդան վարդապետի Սաղմոսի մեկնության գրիչ Խաչատուր աբեղան է 1624 թ. արտագրել այս մի քանի տեղեկությունները[2]։ Իրականում այս բնագիրը Գ. Կամախեցունը չէ։ Վերջինս ժամանակագրական մի քանի մանր բնագիր կորստից փրկելու նպատակով գրել է իր ժամանակագրության սկզբում։ Այսպիսով, այս տեղեկությունները ժամանակագրական նման մի ուրիշ բնագրից է հանված։

ԺԲ. Դարձյալ «Դիւան»-ից[3] վերցրած այս փոքրիկ բնագիրը Դ. Աղայանցի ասելով քաղված է «Սերաստիա եղած մի բժշկարանից»[4]։ Վկայությունները համառոտ են և վերաբերում են XVI դարի վերջին և XVII դարի առաջին կեսին։

ԺԴ. Այս բնագիրը քաղեցինք ՄՄՄՑ-ից[5], որը նախապես հրատարակվել է «Հանդէս Ամսօրեայ» ամսագրում[6]։ Երկու բնագրի համեմատությունը ցույց տվեց, որ կան մասնակի շեղումներ և վերջինում տեղ են գտել սրբագրական մի շարք սխալներ, որոնք կնշվեն ծանոթագրություններում։ Ժամանակագրությունը կազմել է Մկրտիչ աբեղան 1660 թ. և ընդգրկում է 1603—1677 թվականները, սակայն այդ տեղեկությունները չափազանց համառոտ են։ Վերջին մի քանի վկայությունները վերաբերում են հեղինակի կենսագրականին, որոնք ավելացվել են ժամանակագրությունը կազմելուց (1660 թ.) հետո։

ԺԴ. ՄՄՄՑ-ի № 18 գործի 35-րդ էջում գտնվում է մեզ հետաքրքրող բնագիրը։ Մ. Տեր-Մովսիսյանը այն վերցրել է Երուսաղեմի № 1833 ձեռագրից։ Ժամանակակցի մեկը գրի է առել 1651—1668 թթ. տեղի ունեցած մի շարք եղելություններ։

ԺԵ. Այս բնագիրը վերցրել ենք Ա. Սյուրմեյանի հայերեն ձեռագրերի ցուցակից[7]։ Այս առանձին տեղեկությունները, որոնք գրի է առել Ղալամքար Հովհաննեսը Հալեպում, վերաբերում են 1633—1679 թվերին։

ԺԶ. Մատենադարանի № 3812 Հայսմավուրքի հիշատակարանից հետո[8], մի ուրիշ անձնավորություն, էջի դատարկ մասում, ավելացրել է այս մի քանի համառոտ վկայությունները, որոնք վերաբերում են 1623—1694 թվերին։

ԺԷ. Մատենադարանի № 4961 Մաշտոցի 148բ դատարկ էջում և 149ա

---

1 Գիրք Ժ, էջ 39—40։
2 Նույն տեղում, էջ 39—40։
3 Նույն տեղում, էջ 102։
4 Նույն տեղում, էջ 102։
5 Գործ № 33, էջ 256—257։
6 1912, էջ 56—57։
7 «Ցուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի», հա. Ա, Երուսաղէմ, 1935, էջ 387—388։
8 Ձեռ, № 3812, էջ 1032։

էջի ներքևի լուսանցքում Հովհաննես Սարկավագն[1] անվարժ գրով ավելացրել է իր ժամանակին՝ 1702—1723 թվերին վերաբերող մի քանի վկայություններ։

ԺԸ. Մատենադարանի № 5180 ձեռագրի 533բ—534ա էջերում ձեռագրի ստացող Ոսկան քահանան թողել է 1689—1709 թվերին վերաբերող մի քանի վկայություն։ Մեկ ուրիշը նույն ձեռագրի վերջին պահպանակի բ էջում արձանագրել է երկու վկայություն Նախիջևանի խաների մասին, 1697 և 1709 թվերին վերաբերող։

ԺԹ. Մատենադարանի № 7087 ձեռագիրը ընդօրինակվել է 1639 թվին Ադուլիսում, Մարտիրոս գրչի կողմից[2]։ Մեկ ուրիշը՝ Կիրակոս վարդապետը, Տաթևում, որը 1713 թ. դարձել է վանքի առաջնորդ, ձեռագրի վերջին դատարկ էջում գրի է առել իր ժամանակին՝ 1697—1719 թվերին վերաբերող մի քանի տեղեկություններ, որոնք գտնվում են ձեռագրի 363բ—364ա էջերում։

Ի. Մատենադարանի № 9105 Ավետարանի առաջին մի քանի էջերում[3], անվարժ ձեռագրով, սանահինցի Սահակ քահանան արձանագրել է 1654—1713 թվերին վերաբերող մանր տեղեկություններ։

ԻԱ. Այս բնագիրը, որը, ինչպես երևում է, տարբեր մարդկանց կողմից արձանագրված առանձին եղելություններ են, նույնպես վերցրել ենք Ա. Սյուրմեյանի հայերեն ձեռագրերի ցուցակից[4]։ Սրանք շուրջ հարյուր տարվա՝ 1639—1740 թվերի զանազան անցուդարձերի նշումներ են։

ԻԲ. Հողթանի գյուղերից մեկի (ամենայն հավանականությամբ Փառակա գյուղի) բնակիչ, Ղարամի որդի Պետրոս սարկավագը 1719 թ. ընդօրինակելով Մատենադարանում պահվող № 604 ձեռագիրը նրա 198բ—199ա էջերում թողել է իր հիշատակարանը։ Գրիչը հիշատակարանին կցել է հայրենի և շրջակա գյուղերում տեղի ունեցած մի քանի տարիների անցուդարձին վերաբերող, հետաքրքրություններից ոչ զուրկ, փոքրիկ ժամանակագրություն, որը վերաբերում է շուրջ 16 տարվա՝ 1703—1719 թվականներին, թեև բնագրում չի պահպանված ժամանակագրական կարգը։ Վկայություններն ականատեսի և առանձին դեպքերում եղելություններին մասնակցողի ստուգապատում հաղորդումներ են, որոնք վերաբերում են տեղական կառավարիչների կամայականություններին, հարևան գյուղերի միջև հողի համար եղած վեճերին և այլն։ Հեղինակը, վերևում նշված հիշատակարանում, հետաքրքիր ձևով է բնորոշում հոգևորականության հասարակական դիրքը իր անձի օրինակով, ասելով, թե «աղքատաց արեան հացն կերի» (էջ 198բ—199ա)։

ԻԳ. Ժամանակագրական սույն հատուկտորն արտատպեցինք «Դիւան»-ից[5] և, ինչպես հրատարակիչն է գրում, այն քաղված է «Մեբաստիայի ս. Նշան վանքի կանոնգրքի սկզբից»[6]։

---

[1] Այս բնագիրը հրատարակվել է նաև Հովհաննես Ծղակեցու անունով («Դիւան», դիրք Ժ, էջ 379—380) գգալի սխալներով և սրբագրությամբ։

[2] էջ 363ա և բ։

[3] էջ 2ա—8ա։

[4] «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Հալէպի և Անթիլիասի ու մասնաւորաց», հա. Բ, Հալէպ, 1936, էջ 100։

[5] Դիրք Ժ, էջ 377—378։

[6] Նույն տեղում, էջ 377—378։

ԻԴ. Այս բնագիրը, որն ընդգրկում է 1651—1723 թթ. տեղեկություններ, մեծ մասամբ շինարարական աշխատանքներին վերաբերող, վերցրել ենք դարձյալ «Դիւան»-ից[1]։ Հրատարակիչ Գ. Աղանյանցն այս ժամանակագրության մասին գրում է, որ այն քաղված է «Եւդոկիա գտնուած պատկերահանի մի Աւետարանից»[2]։

ԻԵ. Մատենադարանի № 2245 ձեռագրի ընդօրինակությունից (1689 թ.) հետո, մեկ ուրիշը, ձեռագրի դատարկ էջերից մեկում, արձանագրել է ժամանակակից մի քանի տեղեկություններ, որոնք վերաբերում են 1724—1759 թվերին։

ԻԶ. Գ. Սրվանձտյանը «Թորոս աղբար»-ի Բ հատորում[3] հրատարակեց առաջարկվող բնագիրը, որը, ինչպես երևում է տվյալներից, ձեռագրում գրի են առել տարբեր անձնավորություններ՝ Սարգիս Համթեցին, Գասպար Զնքուշցին, Գրիգոր Խարբերդցին, հավանաբար էլի ուրիշները։ Հրատարակիչը ծանոթացնում է, որ այս տվյալները «հին ձեռագրի մը թղթոց էջերը գրուածներէն» են[4]։ Վկայությունները դասավորված են ոչ ժամանակագրական կարգով և վերաբերում են 1665—1801 թվերի առանձին եղելություններին։

Միևնույն գրքում Գ. Սրվանձտյանը նշում է մի ուրիշ ձեռագիր Աստվածաշունչ «որոյ կողն գրուած էր» (էջ 467) ներքևում բերված մի քանի տեղեկությունները, որոնք գրի է առել դարձյալ Գասպար Զնքուշցին։

ԻԷ. Մատենադարանի № 944 ձեռագրի վերջին՝ 227բ էջի տարբեր մասերում, տարբեր անձնավորությունների կողմից խառն ի խուռն գրի է առնված մի քանի մանր տեղեկություններ, որոնք ընդգրկում են 1663—1773 թվականների դեպքերը։ Բնագրում մի երկու վկայության սկզբի մասը կտրվել է ձեռագիրը կազմելու ժամանակ և դրանց միտքն անհասկանալի է մնում, այդ պատճառով այդպիսիք չվերցրինք։ Հրատարակության բնագրում տեղեկությունների ժամանակագրական հաջորդականությունը դասավորել ենք մենք։

ԻԸ. Մատենադարանի № 2706 Ավետարանի դատարկ էջում, եկեղեցական և քաղաքական գործիչ Հովսեփ Արղությանցի կողմից, Ղրիմից հայերի տեղափոխվելու և Նոր-Նախիջևանի հիմնադրման մասին գրի առնված մի քանի տեղեկություններ են։

ԻԹ. Մատենադարանի № 9398 ձեռագրի 1ա, 194բ և 195ա, բ էջերում առկա է երեք անձնավորության կողմից արձանագրված մի քանի դեպքեր, որոնք վերաբերում են XVIII դարի 90-ական թվերին Գանձակում տեղի ունեցած միջֆեոդալական կռիվներին։

Լ. Վկայություններին ժամանակակից տարբեր անձնավորություններ (չորս հոգի) Մատենադարանի № 7321 ձեռագրի 207բ էջում արձանագրել են մի քանի մանր տեղեկություններ, որոնք վերաբերում են 1765—1797 թվերին։

ԼԱ. Ժամանակագրական այս երկու փոքրիկ փշրանքը գտնվում է Մա-

---

[1] Գիրք ժ, էջ 377—378։
[2] Նույն տեղում, էջ 377—378։
[3] Կ. Պոլիս, 1885, էջ 465—467։
[4] Նույն տեղում, էջ 465։

տենադարանի № 3276 ձեռագրի 389բ դատարկ էջում, որոնք գրի է առել ժամանակակիցներից մեկը։

ԼԻ. Մատենադարանի № 6485 ձեռագրի դատարկ էջում մեկը, ոչ հաջորդական կարգով, գրի է առել VII—XVI դարերին վերաբերող մի քանի առանձին վկայություններ, որոնց մեջ ամենից ընդարձակը, որոշ շեղումներով, գտնում ենք ԺԲ հատվածում։

ԼԳ. Մատենադարանի № 2191 ձեռագրի 123ա էջում, առանց ժամանակագրական հաջորդականության, արձանագրված են մի քանի տեղեկություններ, որոնք վերաբերում են մեծ մասամբ XIV դարին։ Սրանց հեղինակները, ամենայն հավանականությամբ, տարբեր անձնավորություններ են։ Հեղինակների ստույգ ժամանակը որոշել չկարողանալու պատճառով այս բնագիրը բերում ենք վերջում։

XXV

Ա.

Եւ՝ ես՝ Հեթում որդի վերոյ անուանեալ[1] ծնաւղացս, որ յետ 270
իւրեանց վաղճանին թողին ինձ զայս Սաղմոսարանս ի տաս-
տիարակ յայսմ կենաց || և ի յուս հանտերցելոցն և իւրենք 271
չուեալ... աստ[ք]ացս...որ է իւրեանց փոխման աւուրքն այս.

5 Ի թվին Հայոց ՉՃՂԹ (1250)[3] ի յունիս ԻԹ (29) սպանին
զպարոն Հեթումն, տէր Լամբրունին, պապն իմ[3]։

Եւ ի թվին ՉԱ (1252) և ի յունվար ԻԴ (23)[4], որ էր աւր
երեքշաբթի, հանգեաւ ի Քրիստոս բարեպաշտ մամն իմ Զապել թա-
գուհին[5]։

10 Եւ ԷՃԺԹ (1270)[6] հանգ[ե]աւ ի Քրիստոս պապն իմ թա-
գաւորն Հայոց Հեթումն։

Եւ ՉԼԴ (1285) ի յաւգոստոս Թ (9) փոխեցաւ ի Քրիստոս
ամենայ գովելին հոգով և գեղեցիկն մարմնով մայրն իմ թա-
գուհի Կեռան։

15 Եւ ի ՉԼԷ (1288) ի փետրուվար Զ (6) փոխեցաւ առ ի Քրիս-
տոս բարէպաշտ թագաւորն Հայոց Լևոն, յորմէ փախեալ էր ի
նմանէ ամենայն անչափութիւն և մայր էր ամենայն չափից։
Եւ ինձ աւանդեցին ժառանգութեամբ թագաւորութիւնս Հայոց։
Եւ իմ Հեթմոյս տեսեալ զի[մ] անարժանութիւն, յառաջ քան
20 զկոչելն. զիս հրաժ[ար]եցի, և զձիւ թագաւորական փոխեցի ընդ
ձիւ կրաւնաւորական, որ և զՀեթում անուն[ս] Յովանէս վերայ-
փոխեցի, վասն որոյ աղաչեմ զձեզ զի զվերոյ անուանեալ ծնաւղս
իմ յիշել յաղաւթս ձեր առ Քրիստոս և զիս Հեթումս յաղաւթս
ձեր, ոչ մոռանալ և դուք յիշեալ լիջիք...։

Բ

ՎԱՍՆ ՂԱՆԵՐԱՅՆ 289ա

Յեաւթն հարուր և վեց (1257) թվականին Հայոց եկին յա-
րևելից, ուստի մեծ ղանն էր, է (7) զա || նի որդիք, ամէն տու- 290ա
ման մի հեծելով, և մի տուման ԼՌ (30000) մարդ է, որոց գլխա-
որն էր Հուլաւու ղան, եղբայր Մանկուն ղանին. երկրորդ՝ Խուլն,
25 որ զինքն Աստուծոյ եղբայր ասէր և ոչ ամաչէր։ Գ. Բալաղէն.
Դ. Տութարն. Ե. Թակուդարն. Զ. Ղատա ղանն. Է. Բուրա ղանն։

Հուլայուն Բաղդատ աւերեաց թվին ՉԷ (1258)։ Յետ Հուլաւուին նստաւ դան Արաղէն, որդի Հուլօին։ Յետ Արաղին՝ Ահմատն նստօ։ Արղունն, Արաղին որդին, սպան զԱհմատն և ինքն նստօ դան։ Արղունէն յետ Թուլար Բուղան նստաւ[1]։ Յետ Թուլար Բուղային Թօղթան նստօ, յետ սորայ Գայտուն նստօ. յետ սորայ Ղազանն է ընկերն իւր Նաւրուզն նստան. յետ սոցա սուլթան Խարբանդէն, եղբայր Ղազանին նստօ. յետ սորայ որդի [ի] իւր աշխարհակալ Բուսայիտն նստօ. յետ սորայ որդի իւր Արիա դանն նստօ։ Յետ սոցա այլ հաստատ դան չնստան, քանզի այր դրամբ ելեալ Ալի փաշայն զԱրփայն եսպան Մուսէ դան նստուց. յետ Մուսային Մահմայ դան նստօ, յետ սորա Աւզրէկ դան նստօ. յետ սորա Ճանի դան նստաւ։

* * *

ՉԸ թվին (639)[8] ելն Տաճկաց ի Հայս։ 292ա

ՈԾԲ (1203) Ֆռանկն էառ զթագաւորութիւն Հռոմին[9]։

ՈԶ (1231) Թաթարն զԽորազմն կոտորեց և էառ զԴա[ն]ճակ[10]։

ՈԶԸ (1239) խաւարեցօ արեգակն և մեռաւ Աւագն[11]։

Զ (1251) Վանական վարդապետն մեռօ և Մանկու դանն նստաւ։

ՇՀԱ (1122) Դաւիթ թագաւորն էառ զՏփխիս[12]։

Գ

Թվին ՉԷ (1258) էառ Հալասանն[13] զՀալպ։ 153

Թվին ՉԺԵ (1266) զթագավոր որդիքն սպաննէին, որ բրոնեցին[14]։

Թվին ՉԻԴ (1275) սուլտան երեկ[15]։

Թվին ՉԻԷ (1278) զԱնղուղակ (?) էառ։

Թվին ՉԺԸ (1269) շարժ եղաւ[16], Բ (2) բերդ և գիւղք է վանորայք մեռան, ընկղմեցան։

ՉԻԴ (1275) սուլտանն և Երաղու[17] զամենեսեան դերի վարեալ, որն (?) Հեթում, Ալֆին եկեալ Վարդավառին։

ՉԼ (1281) եկեալ Թաթարն, որ է գլխաւոր Մանկու Դամուրն, գնաց Դմիշխ և ի Հռոմս։

ՉԽ (1291) առին զԱքա։

ՉԽԱ (1292) առին զԽչսըմր[18], զՀաւոումկլայն։

ՉԽԹ (1300) Խազանն ատնթագ (?) գնաց ի Շամբն և կոտորեաց զմոբաւորն և անհեծելն։

ՉԾԲ (1303) ելաւ ի Խամէն Խութ համար ու շահն ու Զաւպանն ու մուլքն ու Տաճիկք զթիւ որնու (?) մտան ի Լամբն[19] յաշխարհս ու ճակատեցան ընդ սուլտանն, լցուաւ և այրեց և փախանին և բազում մարդ կորեաւ։

ՉԾԵ (1306) Խազամն ու Խնու Ալինախն Ցայտս կոտորեցին զՀալպա հեծելն՝ ԺՌ (10.000) Տաճիկ սատակեցաւ։

ՉԿԸ (1319) յուլիս ԺԸ (18) Ըռիթայն հանկեաւ[20]։

Թվին ՉԾԶ (1307) յԱնարզարա Գիլարդուն նենկութեամբ

սպան պատք պարոն ու. զԼևոն Թագաւորն ու այլ շատ իշխանայք[21]։

Թվին ՉՋՋ (1337) յուլիս Դ (4) ի Բարձրբերդս լերունքն նոր ձոյն[22] երեք[23]։

5 Ի Թվին ՉՁԴ (1334) նոյեմբերի ԺՀ (18) ծնաւ Դրիգորն, Յոհանէսին կտրիչն։

Թվին ՉՁԸ (1339) յունիս Դ (4) գնաց մեր հեծելն ի Հաթի Թուրքմանն ի Ծեծուխան կրվեցաւ ու շատ մարդ կորեաւ ու զմեր Կոստանցա սպասաւորն[24] բռնեցին, ի հետ երեք Թուրքն

10 գտաւ անհոդ ու ծեծեց, զԱղոխուտն[25], զԲազկիկն, զԹաւրկնոցն տարաւ զաններոյն[26], զամէն ըղակն ու զՄարտիրոսն ու այլ շատ ծառայք. ի հետ ԻՁ (26) աւուրն տարան զՅոհաննէսի երիցկին, ներզ(?) զաւաքն, ծառա ու զասպառալունս (?) և կինն և այլ շատ ծառայք ԲՃԾ (250) ու անասունք, բաղում է անհամար սպա-

15 նուան...։

Դ

Յամի տեառն ՌՅԼՁ (1376), յուլիս ԺԷ (17), օրն հինգշաբթի, նահանջ, տանուտէրն խեցգետինն, արեգականն Դ (4) մասն խաւարեցաւ[27]։ 71ա

[Ի] սոյն ամի, յօգոստոս ԺԲ (12), Ջնվէզքն առին զՍտինպոլն։

Յամի տեառն ՌՅՁՁ (1386). յունվար Ա (1), օրն երկուշաբթի, լուսնագիրն Ա (1), տանուտէրն ցուլն, արեգակ[ն] դարձեալ խա[ւա]րեցաւ[28]։

Ի սոյն ամի ի յունվար ԺՁ (16), օրն երեքշաբթի, լուսինն Դ (4) մասն խաւարեցաւ ընդ առաւօտն[29]։

Յամի տեառն ՌՅՁԸ (1388), տանուտէրն խեցգետին, նահանջ, ոսկէթիվն Բ (2), կիրակէգիրն Դ (4), մայիս ԻԱ (21), օրն հինգշաբթի, լուսինն ԺԵ (15) աւուր խաւարեցաւ Դ (4) մասն, յառաջին ժամ գիշերոյն[30]։

Յամի տեառն ՌՅՁԹ (1389) մարտի ամսոյ Ի (20), օրն շաբաթ. ի կէս աւուրն, եղև շարժ է արար վնաս ի Շիօն և ի Զըմիոն։ || Յադամա մինչև յօրս յայս են ամք ՉՌ և Դ (6003) և այժմ թվական փրկչին է Ռ և Ն և Է (1407), նահա]նջ]. և տանուտէր տարոյ խեցգետին, լուսնագիրն Ա (1) և կիրակէգիրն Դ, Գ (4,3), փետրվար ԺԹ (19) օր։ Եւ թվականն Հայոց է Գ և ԽԹ (1400)։ Կալ զթվական փրկչին և ՇԾԱ (551) ի ըաց, [illegible] որ մնա թվական է Հայոց։ 71բ

Յամի տեառն ՌՅԽԸ (1348) եղև ընդհանուր մահ տարաժամն ընդ ամենայն աշխարհ, սկսաւ յարևելս և գնաց մինչև

40 յարևմուտս և բաւեաց Գ (3) ամ[31]։

Դարձեալ յամի տեառն ՌՅԿԱ (1361) եղև երկրորդ մահն և բաւեաց ի յունիս ամսոյ մինչ ի յունվար[32]։

Դարձեալ յամի տեառն ՌՅՁԷ (1387) եղև երրորդ մահն ի Յեփեսոս, սկսեալ ի մարտ ամիս և բաւեաց մինչև յօգոստոս ամիս։

Ցամի տեառն ՌՑՁՁ (1386) դեկտեմբերի Դամուռ Լանդն էառ զՏփխիս և աւերեաց. և զԲագրատ պարոնն տաճկացւոց և տարաւ ընդ իւր՝։

* * * ա

Ցամի տեառն ՌՄԺԷ (1217) կարգն սուրբ Տամինիկու հաստատեցաւ։

Ռ՚ՄԽԹ (1249)[34] կարգն սուրբ Ֆրանցիսկոսի հաստատեցաւ։

ՌՑԿԳ (1363) միաբանողաց սուրբ կարգ հաստատեցաւ։

ՌՑԽԲ (1342) Արզրու�աւեր[եցաւ]։

ՌՑԽԴ (1343) Ջանիպէկն երեկ ի վ[երայ] Կաֆային[35]։

ՌՑԽԸ (1348) եղև մեծ մահն յա[ռաջին][36]։

ՌՑԾԸ (1358) Ջանիպեկն գնաց Թա[ւ]րէզ և եսպան[37]։

ՌՑԿԵ (1365) Ջընվէզք առին ըզՍուլտան և զՂրիմն։

Ցամի տեառն ՌՆԽԹ (1449) Թվին, օգոստ[ոս] յամիս, ԺԵ (15) օրն, փոխման Աստուածածնին տօնին, կայծակն էզարկ սուրբ Նիկոլայ զանկակատան գլուխն ավէրեց՝ վէսպրին։ բ

Ցամի տեառն ՌՆԾԳ (1453) Թվին, մայիս ԻԹ (29) օրն, Ցօթմանի որդին Ըստամբոլն էառ, շատն տէոէտրութեամբ,(?) ԽՌ (40.000) հոդի սուրն մաշեցաւ, թող զայլն, որ առանց սրոյ մեռան յահէն։

Ցամի տեառն ՌՑՂԲ (1392) եղև չորրորդ մահն, ի Ղալատաս սկսեալ ի յուլիս ամիս մինչև ի նովեմբե[ր]։ գ

Թվին Հայոց ՋՀԲ (1523) մա[ր]տի ամիս ԻԹ (29), աւր կիրակի[ի] Ծաղ[կ]այզարգի, ձուն էրեկ խիստ։

Թվին Հայոց ՋՀԲ (1523) մարտի Ի (20), կիրակի, գրեցաւ ա[յս]։

Ղալաթան էթող զքաղաքն ու նավ մտաւ ու փախեաւ Լևոն գնաց։ ե

Հազար ավախ որ այս ծովափներոյս քրիստոնեութիւն կամի ջնջիլ։

Թվին Հայոց ՋԻԴ (1475) Կաֆան առէվավ[38]։

Թվին ՋԼԱ (1482) | | |

Ե

ՊՀ (1421) Նստաւ Աքան[դ]արն ղ[ան]։ 306բ

ՊՀԱ (1422) առաջին գալն Շահռուխ[խի]ն[39]։

ՊՀԲ (1429) միջին գալն և Բուսաիտն [ղան] եղիր և տանուտէր աղ[ե]ղն[աւորն][40]։

ՊՁԵ (1436) յետին գալն և տ[ան]ուտէ[րն խե]ցգետին[41]։

ՊՁԹ (1440) Ջանհանշէն [Շ]ամշուլտէ առ և կոտորեաց աւելի քան զերեք Ռ (1000) և տարաւ գերի աւելի քան զինն Ռ (1000) և մեծ սուք եթող քրիստոնէից, զի բազումք թողին զՔրիստոս[42]։

Ջ

Ի ՊՁԹ (1440) թուականին Ջհանշայ ամիրզէն ի Վ.րաց 17

տուն մտաւ և շատ աւելի արար և զեկեղեցիքն քակեց և քան զտասն երկու հազար աւելի ի Հայոցս զորս սպան և զորս գերի վարեաց[43]. և ՊՂԲ (1443) զԲազդատն էառ[44]։

Ի ՊՂԹ (1450) էառ Ջհանշայ ամիր || զէն զէզընկէն և ան- 18
5 թիւ քրիստոնէից կանայք և մանկունք գերի կալաւ։

Եւ Ջ (1451) թիւն ղՂլաթայ երկիրն և զԲազիշուն արար գերի և գետին. վայ հազար բերան, որ զայս խրղճերըս տեսաք ոչօք մերօք ի ժամանակին մերում։

Է

ՊԼԶ (1387) թվին Լանկ թամուր գնաց մինչ ի Դմբշխ և 290ա
10 Լէն ի Հոյս, եկաց ամս ԺԷ (17) գնաց ի Սմբրզանա մեռ։

ՊՀ (1421) թվին Ջազաթէն արեկ աշխարհս Հայոց։

ՊՀԱ (1422) Շառուխն, Լանկին որդին, երեկ Ղարաբաղն։

ՊՀԲ (1423) Վրացին՝ Ալէքսանդրն երեկ։

ՊՀԹ (1430) || թվին դարձեալ երեկ Շառուխն, Դէմետրէն 291ա
15 զէմ գնաց Ղարաբաղն։

ՊՂ (1441) աջն բերին ի Սբսոյ։

ՊՂԴ (1444) թվին Ջհանշէն Ախլցխա գերացուց։

ՊՂԵ (1446) Ջազաթէն գնաց ի վերայ Շառուխին իւր մահուն մեռ։

20 ՋԺԶ (1467) Հասան բէկն գնաց Վրաց տուն գերացուց։

ՋԼԲ (1483) Ցազուբ բէկն շրի։ Հայտաղն առաւ։

ՋԼԹ (1490) Եազուբ բէկն մեռ Սունդարն կանկնեցս։

ՋԽԸ (1499) Ըոստամն կանկ[ն]եցաւ և յետ նորա Ալվանան։

ՋԾ (1501) թվին շահ Իսմայէլն արեկ Ալվանդն էառ[45]։

25 ՋԿԴ (1514) Ուռուսն երեկ շահ Իսմայիլն փախս[46].

ՋՀԵ (1526) շահ Իսմայէլն մեռ, շահ Թահմազն թախտ ելաւ։

ՌԹ (1560) սուլթան Բայազիտն Դ (4) որդովն ԼՌ (30000) մարտով երեկ շահ Թամազին ոտքն և կոտորեցին։

30 ՌԻԵ (1576) շահ Թամազն համամում դեղեցին՝ մեռ, սուլթան Հայտարն սպանեցին, շահ Իսմայիլն բերդէն դուրս բերին, թախտ ելաւ[47]։

Ը

Թվին ՌԽԹ (1600) վազիրն Ցուռհայոյ եկաւ յԱմիթ յունվարի Ա (1). մարտի Դ (4) խապար եկաւ յԱմիթ. Եազիչուն ելաւ 272ա
35 Ցուռհայոյ, մարտի Զ (6) ելաւ վազիրն Ցամթայ, ի Կոստանդնուպօլսէ մինչև Ցամիթ գեաւղ և քաղաք շէն չեթող զամէնն աւերեց, որ ընդ գրով արկանել չի գայր։

Թվին ՌԽԹ (1600) ապրիլի ԻԱ (21) գետը մի հաց եղև 291բ
Ցամիթ Ը (8) շահի ու չէր գտի, Հայ ու Տաճիկ գացին ի վերայ
40 դատուորին մահու կու սպասեն չի կարացին։

Վայ ժամանակի նեղութենիս՝ թվին ՌԽԹ (1600), մայիս Դ 299բ

(4), չարեկ մի ցորեն Ա (40) շահի, չարեկ մի կլկլ[48] ԼԲ (32) շահի, չարեկ մի կորեկ ԻԴ (24) շահի։

Թվին ՌԽԹ (1600) երեկ Ազարիա կաթողիկոսն ի Ճողայոյ, 314գ
ի նոյեմբերի Դ (4) ելան յԱմթայ գնացին ի Հալապ։

Գ

Դրիգոր Նարեկացւոյն ժամանակ թուին ՆԾԲ (1003), 101
Աենեքարիմայ գալն ի Սեբաստիայ թուին ՆԿԷ (1018),
Թամուրին գալն ի Աերասաիայ ի յամի ՊՂԶ (1447)[49],
Աւթվանցուն զԲուզանդիայ առնուլն թուին ՉԲ (1453),
Ամիրպակին գալն թուին ՉԽԱ (1492),
Շահ Դահման մինչև Ցեղընկան էրեց թուական ՉՂԷ (1548),
Թագաւոր եղաւ Ուզուն Մահմատն[50] ՌԽԴ (1595),
Ղարայ Եազինճին այրեց զՍեբաստիայ թուին ՌԾ (1601).
և եզբայր նորա աւերեց զԹոխաթ թուին ՌԾԱ (1602)[51], Եւ այս
ամի եկաւ Մուրատ փաշան ի Հալապ նստաւ և Ճանփօլատին
տղան փախուստ արաւ թուին ՌԾԶ (1607)։

Ժ

Ժամանակագրութիւն կամ գաւազանագիրք, աշխատասիրեալ յԱւետիքայ ումեմնէ։

Օսմանցւոց թագաւոր սուլթան Մուրատ, որդի Սէլիմին. 202
սէրասքէրք սորա առին զնախչվան, և միւս ամին էտո զՏէմուր-
Ղափուն, ե զրազում զօրս առաքեաց աշխարհն Պարսին և էտո
զԹէվրիզ, զԵրևան, և զԿէնճէ ե զԱրաշ[52] և զՇամախի. զՇրվան
մինչ ի Թիֆլիս. Լ (30) աւուր ճանապարհ զլայնութիւն ե զեր-
կայնութիւն տիրեաց աշխարհացն. ԺԷ (17) ամ հեծելակոխ եղեալ
ի սովէ ե ի սրոյ ե բազումք երկիրք մեռան և աւերեցան։

Եւ ի ՌԻԹ (1580) թվին Հայոց նեզացեալ Մուրատ խոնդ-
քեարն ի Հրէից և ի քրիստոնէից համարձակութենէն և վերա-
ցոյց զփակիզն ի գլխոց նոցա, և սաստիկ եասախ արար և սահ-
մանեաց զսև գտակ գնելն, բայց ի տեղիս տեղիս կաշառս ետուն
և առին զհրաման գնել զփակիզ[53], յետ ԺԸ (18) ամի[54] ապա
Կոստանդինուպօլիս. և այլ բազում քաղաքք ինացին գտակով։

Ի ՌԽԳ (1594) թվին Հայոց, դեկտեմբերի ԼԱ (31), սուլթան
Մուրատն մեռաւ և ինաց հոգով մեռեալ հոգևոր մինչ ի ՌԽԴ
(1595) թիւն յունվարի Զ (6). ապա մեռաւ և թագաւորեաց Մահ-
մէտ, որդի նորա, յունվարի ԺԷ (17) և մինչ յունվարի ԻԲ (22).
ապա ածաւ սուսեր թագաւորութեան ընդ մէջն և նստաւ ի
թախթ։ Եւ սա էտո Բ (2) ըերթ ի Մաճարէն։ Եւ ոչ կարէր
վարիլ զթագաւորութիւն, ծառայք և պարոնայքն ամենե-
քեան ապստամբեցան և զերես դարձուցին ի նմանէ, քանզի ինքն
միայն ոչ էր իշխանաւոր, կամ յորժամ տայր զքաղաք մի փա-
շայի միոյ կամ պարոնի, յետ Ժ (10) աւուր կամ Ի (20), մայրն
կամ քոյրն կամ իւր կինն կամ վէզիրն տային այլոյ փաշայի և
առնուին զրազում կարմիր գահեկան. զՏիգրանակերտն Համիթ

ի Զ (6) ամիսն Թ (9)փաշայի ետուն. կայր զի փաշան գայր, կայր զի փաշայի վէքիլն գայր. նոքա երբ գային գիտէին, զի բանի յետքն փուչ է, նոքա այլ սկսանէին կողոպտել և թալանել ղբաղաքն և զերկիրն. և ոչ է կար մեզ պատմել զժամանակիս
5 գառնութիւնն. զի յԱմիթ աստ և անդ շենութիւն կայր, ապա յԱմթայ կէս աւուր հողէն, որ ի դուրս երթայր մինչ ի մեծ քաղաքն Ըստամբոլ աւերութիւն էր[55], ուր ուրեք գտանէր շենութիւն. պատճառն այս է, զի յաւուրս սորա յայտնեցան Ջալալիք, որ են այսոքիք՝ նախ[56] Ղարա Եաղիճին բազում հեծելօք ՌՄԷ
10 (1598) թվին ապստամբեցաւ ի թագաւորէս և եկեալ յՈւրհա քաղաք, եմուտ ի բերդն և ամրացաւ։ Եւ թագաւորն ի վերայ սորա սարդար առաքեաց ՄՌ (40.000) մարդով, ոչ կարաց յաղթել և Եաղիճիս զօրացաւ և այլ զօրս ժողովեաց ի վերայ իւր և նոքօք սկսաւ աւերել զաշխարհս, երկրորդ Լէնկ Թէմուրն, և խաղաց անտի
15 ի կողմանս Կապադովկացւոց, աւերեաց՝ զՍիրաստիա, զԹօխաթ, զՊուրսա, զԵնկուրի։ Եւ զերկու տարվայ խարաջն յայս միջոցս յափշտակեաց Եաղիճիս. և յինքն առնոյր և տայր զօրացն. և բարդէր ի վերայ իւր զօրս. և այնչափ Ջալալիք ժողովեցան ի վերայ սորա, մինչ զի առէին, թէ ԴՃՌ (400000) ձիաւոր ունէր, որ
20 թագաւորն Օսմանցւոց երկեաւ ի սմանէ և ոչ կարէր ի դէմ գալ, զի տկար էր, անարի և երկչոտ։

Եւ ՌՄԸ (1599) թուին Հուսէյին փաշայն ապստամբեցաւ և հետ սորա Քօսա Սաֆարն։ ՌԾ (1601) թվին Ահմատ փաշայն ապստամբեցաւ, ՌԾԴ (1604)ին՝ Ենջաղան, ՌԾԴ (1605)-ին՝ Եուլարղոտին և Թաւուլն ՌԾԲ (1603)-ին՝ ԺԲՌ (12000) ձիաւորով, և Թաւուլի եղբայրն Մահմէտ փաշայն ԻՌ (20000) մարդով, Մանօղլի, Ջանփօլատ օղլի Ալի փաշա և սորին եղբայրն, աշըխ Քօրօղլին[57] և սորա ընկեր Գազիր օղլի. Մուսթաֆա բեկ, միւս Մուսթաֆա բէկ, Ղարաղաշ, Տէլու Նասիր, Իօլա Սզմազ, Թանղրի
30 Թանիմազ, Կէօկէպախան, Զփլաղ, Քեասաքեաս, Քրլու, Ղարասահաթ, Աղաջտանփիրի։ Սոքա ամենիքեան Ջալալիք էին, որք ոչ հնազանդէին թագաւորին և ոչ ի տեղի ուրեք զկայ առեալ բնակէին. ուր և լսէին զհամբաւ շենութեան, դիմեալ անդր աւարեալ կողոպտէին և զշենուածսն հրդեհեալ այրէին ի սահմանէն Կոստանդինուպօլսի մինչև Երևան քաղաք, ի Բաղտատայ մինչև ի Դամուր Ղափուն, զՍպիտակ ծովու[58] մէջն և զՍև ծովու մէջն. զայսքան աշխարհս յաւեր և յապականութիւն դարձուցին։ Եւ յայսմանէ պատճառէ հողագործք և երկրագործք յահէ սոցա փախուցեալք, և ՃՌաց Խոպան աշխարհս. և ոչ եղև ցան և վար, վասն
40 որոյ բարձաւ կալ և կուտ և սկսաւ լինել սղութիւն հացի, և ի չգոյէ ուտելեաց սկսան ուտել զկենդանիս՝ զարջառս և զոչխարս և ի սպառել սուրբ կենդանեաց, սկսան ուտել զանսուրբ կենդանիս՝ զձի զջորի, և զեշ մինչև զշուն և զկատու և իբրև այլ առաւել սաստկացաւ սոքա սկսան ուտել զմեռեալս և հետևեցան ըմբռնել զկենդանի մարդ և ուտել։ Վայ լսողութեանս, ով ընթերցողք։ Եւ եղև սկիզբն սովուս ՌԾԵ[59] (1606) թվին, յորում ամի

թոյլ էր ոովն, և ի ՌԾԶ (1607) և ՌԾԷ (1608) կարի սաստկացաւ և ՌԾԸ (1609)-ին թողացաւ, ի ՌԾԹ (1610) բարձաւ ողորմութեամբն Աստուծոյ, որ ոչ իսպառ բարկանայ ստեղծուածոց իւրոց։

ԺԱ

5 ՋՂԷ (1548) Թաւրէզի շահ Տահմասն եկեալ աւերեաց զԽընուզ, զԲասեն, զԱրզրում, զԴերջան, զԿեղի, զԲարերդ, զԵղընկան, զԸսպեր[60]։ 39

Ի թուին ՌԸ (1559) որդիքն խոնդքարին կոուեցան ի Կոնիա՝ Սէլիմն զՊայազիտանՁվախուց մինչև յԱրզրում. և նա գնաց ի շահն,
10 երեք որդոքն անդ սպանին ի թուին ՌԺԲ (1563)[61]։

Մահ տարածեցաւ ՌԺԷ (1568)։

ՌԻԸ (1579) Երեան գերեցին։

ՌԼ (1581) զտուլպանտն ի գլխնուս || ի վար ձգել տուին 40
եասախով սուլթան Մուրատն[62]։

15 ՌԼԴ (158ՀՀ) Օսման փաշան գնաց էառ զԹաւրէզ[63]։

ՌԽԱ (1592) Սեաստու Տաճկնին չարացան, առին զԼուսաւորիչ եկեղեցին[64]։

ՌԽԴ (1594) մեռաւ սուլթան Մուրատ և թագաւորեաց սուլթան Մահումատն։

20 Ի թուին ՌՀԴ (1624) ի Թէքիրտաղն դտայ զայս բանս և դրեցի։

ԺԲ

Թուին ՌԼԹ (1590) էր Արզրում քաղաք այլազգի սրդիքն 103
ի պատիւ կոչեցին զքրիստոնեայք և ի մէկ գիշեր հինգ հոգի ջարդեցին. և մեծ սուգ եղև քաղաքին, քանզի զԹորդումու ձո-
25 բերն տիրեցին, և զամենայն Վրաց տուն ընդ ձեռամբ Տաճկաց արարին։

Թվին ՌԾԶ (1607) էր որ մեծ սոփն եղև և զմիմեանս կերան։

Թուին ՌՁԴ (1635) սուլթան Մուրատն զԵրեան էառ։

30 ՌՂԷ (1648) Ապազայ փաշան ջարդեցին։

ՌՃԷ (1658) Օսման փաշան ջարդեցին։

ԺԳ

ԱՅՍ Է ԹՎԱԿԱՆՆ ՇԱՀ ԱՊ[Ա]ԶԻ

Որ Երեվանա բերթն էառ թվականն ՌԾԲ (1603) էր. Բ (2) 256
տարոյն յետն Գանճայ էառ[65]։

Թվականին ՌԿԴ (1614) Վրաստուն էառ։

35 Թվին ՌԿԶ (1617)-ին Օքուզ Ահմէտ փաշէն եկն Երևան[66]։

Ի նոյն ամին դարձեալ շահ Ապազն գնաց Վրաստուն։

Թվին ՌՀԲ (1623) բարկութիւն Աստուծոյ տեղեաց ի վերայ նոցա, մահուամբ կոտորեաց զնոսա։

Դարձեալ ՌՀԴ (1625) ամին Մուլրուվն դոնմիշ եղև։

Ի նոյն, հոկտեմբեր ամ[ս]ին, Ղօրչիպ[ա]շին եկն Վրաստուն[68]։

Թվին ՌՁԱ (1632) Դաւութ խանն էառ զխոնթկարն. եկն ի վերա Երևանա, էառ բռնութեամբ[68]։

5 Շահ [Ա]պաղն, որ փոխեաց, թագաւորեաց Թոռն նորա՝ շահ Սէֆին՝ ՌՀԸ (1629) էր թիվն։

ՌՁՁ (1637) ճանճէն ուբացաւ։

ՌՂԲ (1643) փոքր շա[հ Ա]պպաղն թախտ ելաւ։

ՌՃԳ (1654)-ին, օգոստոս ամսոյ Գ (3), պատկեր օրն չո-

10 րեքշտրթի, արեգակն խաւարեցաւ ի մէջօրէին[69]։

Թվին ՌՃԹ (1660) եկաք Գանձասար սակս ուսուցանելոյ || 207

զքրիստականութիւն։

Թվին ՌՃԷ (1658) եղէ քահանայ։

Թվին ՌՃ և Թ (1660) գրեցի զթ[ի]ւքս ի Գանձասար ես՝

15 Մկրտիչ աբեղա, վասն Աստուծոյ յիշեցէք։

Թվին ՌՃԺԴ (1665)-ին իշխանութիւն առի։

ՌՃԻԶ (1677) եղէ եպիսկոպոս։

ԺԴ

Թվին Հայոց ՌՃ (1651) բերթին ներսի տներն այրեցաւ 35

մարտ ամիս ի ԺԱ (11), աւրն երեքշաբթի, աւաք պահոցն։

20 Դարձեալ ՌՃԺ (1661) զրսի դիւանխանին դիհն այրաւ յունվար Դ (4), օր շաբաթ։

Թվին ՌՃԺԱ (1662) յունիսն կարմնջին հիմն ձգեցին։

Հոկտեմբերի Է (7), օրն երեքշաբթի, Հայոց նաւասարտն մտաք, ամիրան ի Մուսուլէն Մուրթազին վրայ սաֆար [գնաց]։

25 Թվին ՌՃԺԴ (1664) փետրվարի ԺԴ (14), օրն կիրակի, Իպրահիմ պէկն մեռաւ։

Թվին ՌՃԺԷ (1668) էրզնկան շարժ փլեց։

ԺԵ

Թվին ՌՃԻԸ (1679) ըսկսայ գրել զայս ճանկս(?) ես՝ հալա- 387

պեցի Ղալամքար տէր Ովանէսս ի սուրբ քաղաքն Ե[րուսաղէ]մ,

30 ի վանքն սուրբ Յակոբայ։

Թվին ՌՃԻԶ (1677) փետրուար ամսոյ ԺԷ (17) եկաւ Անարծաթ Ներսէս վարդապետն Հալապ, քարոզեց, բռնել տվին զինք չար մարդիկք, ԲՌ (2000) զոռուշ ճարեմայ [առան] Աստուած անիծէ սապապ եղնողն։

35 Թվին ՌՁԲ (1633) մարտ ԻԶ (26), օրն չորեքշաբթի, Նաւայի փաշան մբտաւ պակլարպակի ի Հալապ. Աստուած զբարին կատարէ։

Թվին ՌՁԲ (1633) ի մայրաքաղաքն ի Սիս դրին Կեսարիոյ Գրիգոր վարդապետին. և Գրիգոր վարդապետին Զէյթնցոյ, և

40 Ներսէս վարդապետին Սեփաստացոյ, և Յակոբ վարդապետին Կարկառացոյ և Մխիթար վարդապետին Ց[ա]րևելոյ, սոցա ամենեցուն հաւանութեամբն դրին յ[ա]թոռ կաթողիկոսութեան զտէր

Սիմէոն արքեպիսկոպոսն, զոր տէր Աստուած զինքն անփորձ և անսասան պահեսցէ և խաղաղ կենօք. վասն այն դրեցաւ, որ ի պիտոյ ժ[ա]մուն իմացուի։

Թվին ՌՁԲ (1633) մարտ ամսոյն ԻԷ (27) Հալպայ զաղին
5 ողարկեց մօհրեց զեկեղեցիքն՝ Հայուն, Հոոմին, Ասորոյն և Մա-
ռունոյն. Աստուած զբարին կատարէ։

Թվին ՌՁԸ (1639) յուլիսի ԺԱ (11), օրն հինգշաբթի, մտաւ սուլտան ի Հալապ և յուլիս ԻԸ (28), օրն շաբաթ, ելաւ ի Հալպայ, Ֆռանկին աղջիկն իւր հետն էր։

10 Թվին ՌՁԲ (1633) մարտ ԻԲ (22), օրն ուրբ[ա]թ, գնաց Հալ-
պայ զաղին ի վօյվատայ խանն, ի յարեալից կողմն, ի վերն
Ֆռանկի եկեղեցի էր շինած Զ (6) տարով յառաջ, ելաւ նամազ
արաւ ի մէջ եկեղեցուն, եւ ի մար || տի ԻԵ (25)-ն ի Շիպէնի 338
խանն Հալապ հին եկեղեցի կայր Ֆրանկին, մտաւ աղան կանչեց
15 և կէս օրն զայն այլ մաչիթի պէս նէմազ սրաւ. և Հայոց ազգն
կու վախէր, թէ մեր եկեղեցիքն չի գայ. Աստուած զինքն զէտ
Ռափսակք և զՍոսթաս դպիրն յետ դարձոյց։

Թվին ՌՁԲ (1633) դեկտեմբերի Է (7), օրն շաբաթ, Գ (3) սայաթին մըտաւ վէզիր Ահմատ փաշան ի Հալապ։

20 Թվին ՌՃԻԶ (1677) եկի ի սուրը քաղաքն Ե[ռուսազէ]մ ես՝ Ղալամքար տէր Ովանէսն։

ԺԶ

ՌՀԲ (1623) Թվին մահ եկաւ խիստ սաստիկ։ 1032

ՌՀԳ (1625) Թվին Մողրոմն դօնմիշ իլաւ[70]։

ՌՀԵ (1626) Թվին Ղօրչիպաշին եկաւ[71]։

25 ՌՀԷ (1628) Թվին շահ Ապազն մեռաւ և թագաւորեաց շահ Սափին։

ՌՁԱ (1632) Թվին Թամրազն եկաւ։

ՌՁԴ (1635) Թվին սուլթան Մուրատն եկաւ։

ՌՁԵ (1636) Թվին շահ Սափին եկաւ Էրէվան առաւ։

30 ՌՂԱ (1642) Թվին շահ Սափին մեռաւ, թագաւորեաց որդին՝ շահ Ապազն։

ՌՃԺԵ (1666) Թվին մեռաւ շահ Ապազն, թագաւորեաց որդին իւր՝ շահ Սուլէմանն։

ՌՃԽԳ (1694) Թվին մեռաւ շահ Սլէմանն, թագաւորեաց
35 որդի նորա՝ շահ սուլթան Հուսէինն[72]։

ԺԷ

Ի <յամի> Թվին ՌՃՀԲ (1723)ին, ելեալ Ոսմանլուն ի Ը- 148բ
տայրօլա Աւդոլայ փաշէն, եկաւ գնաց ի վերայ Պարսից, առաւ ըղԽօ, ըղԹասու[73], ըղԹարֆէզ մինչև ի Գիլան։ Սարու Մոզտա-
ֆայ փաշէն առաւ ըղԷրէֆան մի[ն]չև Գա[ն]ջայ, անչափ զորայ-
40 ցաւ Ոսմայլուն ի վերայ Պարսից, որ Ճ և ՁՌ[74] (106.000) ցրվեր։
Ցասան փաշի լաճ ի Բաղտասայ առաւ Համայդան, ԺԵ (15) տարի այնպէս եկաց։ Յետու ելեալ ի Պարսից շահ Թամազ[75] բազում զո-

բոք, թվին ՌՃՁԴ (1735) եր, առաւ ըզիւր աշխար[հ] ամենայն, ետոր ըզբաղդատ ի խսար, որ շան միս նուկին ի յոսկիմ ե[ղ]աւ Առաւ Աւդոլ փաշէն ՅՌ (300.000) ձիաւոր գնաց ի դիմ Դայմազին ի Ղարս։ Թամազարձակաւ ի վերայ Տաճկին ԳՃՌ (300.000)-ից
5 ԻՌ (20000) մաղայպործ գնաց ի տեղիս իւրեա[ն]ց։ Յետու աստուածայաս բարկութիւն եկաւ ի վեր աշխար[հ]ն Հայոց՝ եկեալ Պարսից ասր ի վերայ Ոչքլիսին, խարեցին զվարդապե[տն] ու մտան ի վանք, քանզի Ալաշկերտ փախած ին ի վանք, ըզմարդիք սպանեցին և կնիկ ու տղան դիրի տարան. փախաւ Սհաթայ-
10 փոոի[15] օլուս, ԾՌ (50.000) տուն՝ եկաւ կերաւ Ալաշկերտու վաստակ ու Մա[ն]ծկրոտու, զԲոլայնոխայ մի[ն]չէ ի Ծղաք[17], փախաւ ի Ցամայդանայ ՃՌ (100.000) տուն, դարգաղանցիք եկան նստան ի Բօլանուխ, անչափ սով եղաւ, որ մարդ զաղան ծախեց || անոր[ին]աց 149ա
ու կերաւ. այայ լցաւ խո[ս]ք Երեմայի, թէ «Ցերեսացն յոսիսո
15 բորրոքեսցեն չարիք ի վերայ երկիրիս։ Ես տէր Յովանէս յանժամ սարկաւաք էի, Ըստայբոլայ նոր եկեր ի Ծղաք՝ օրհնեցայ թվին ՌՃԾԱ (1702) եր։

ԺԸ

Թվին[18] ՌՃԼԸ (1689) մեք՝ տէր Ոսկան և տէր Բարսեղ գնե- 533բ
ցինք ղդիրքս։ Եւ ի թվին ՌՃԽ (1691) եկինք սուրբ Յակօրայ
20 հայրապետին ծառայութիւն։

Եւ ի թվին ՌՃԽԵ (1696)-ն ես տէր Ոսկանս գնացի Խորմաց տունն[19], ժողովք արինք. տէր Բարսեղն տան մնաց, պարիսպն քաշէց և աղբիւրն բերաւ, մէջն հաւզն շինվէց. պարսպին, աղբիւրին և հաւզին, ամէն խարճ գնացել էր Զ (80) թուման։ Ես
25 տէր Ոսկանս սուրբ Խաչի օրն[80] եկի տուն պարիսպն պրծէլ էր, աղբիւրն նոր ձեռ տված. ինչևիցէ Աստուծով շինվէց, Աստուած առաջնորդէ եկեղեցին այլ շինվի։

|| Թվին ՌՃԽԸ (1699) [ձ]եռնարկինք շինել զեկեղեցին, 534ա
Բ (2) աթն կատարվեց՝ ՌՃԽԹ (1700)։

30 ՌՃԾԸ (1709) տէր Բարսեղն հանկեաւ ի Քրիստոս յունվարի մէկն։

Ի սոյն թվի յունիսի Ժ (10) սաստիկ կարկուտ և սել արէց, բազում տեղիս քարքանգ արէց, վանքիս Սահմաստու շամպն ծառով, թմպով մինչև ԲՃ (200) ծառ մէջն արաւ. Պապի Այգո-
35 ձորին կշտի պատն քշվէց, հիսապով մինչև Ի (20) թումանի զարար եղև վանքիս։

Եւ թվին Ռ[Ճ]ԾԸ (1709) ընդհանուր տիեզերս եզանց մահ ընկաւ, յաշխար[հ]ս ծագէ ի ծագ սփռվէց կոտորուն եզանց, վանքէս կոտորվէց ԺԲ (12) հալալ տավար[81]։ Եւ տարիս սախատ տա-
40 րի, այդիք գատարկ, անպտուղ, Աստուած ազատէ։

* * *

Վերջին պահպանակ

Ի թվին ՌՃԽԶ (1697) և օգոստոսի մէկն Նախճիւանա խանն

փոխվէց, Թասխիր եղե, Մահմատ Ռըզա խանն և որդին Նորայ՝ Մուրթուզաղուլին էաո զտեղին հօրն և եկն ի սոյն աւուրս եմուտ ի Նախճիւան։ Խնդրեմք յամենակալէն յԱստուծոյ տացէ սմայ իրաւունս և արդարութիւն զազգս քրիստոնէից պահել առանց հեծեծանաց։

Զերա խիստ են բռնացեալ չար մարդիքն, Թվին ՌՃԾԸ (1709) Մուրթուզալի խանն պէկլարպէկի արարին, ողորկեցին Աստարապատ և որդին Սէֆիղուլի խան կարգեցին մեր յերկրիս, Աստուած զիւրն հանճարս տացէ. ամէն։

ԺԹ

Հայոց[82] Թվին Ռ-որդի ՃՔառասուն Զ-երորդի (1697) խոովեցաւ տէր Ցարութիւնն, ընակեցաւ ի սուրբ Զաթի[83]։ 363բ

ՌՃԾԸ (1709)-ին եղանց և կովուց հասարակ ամենայն աշխարհի մահ անկաւ և կոտորեաց[84]։

ՌՃ և Կ (1711) Ստեփէ իոլոր թէՃ մարախ եկէր, զատ ի Սիսեանէ։

Եւ նոյն ամի մեղրեցի Մարտիրոս վարդապետն նստաւ առաջնորդ, ինդրուածօք ամենայն միաբանից և ժողովրդոց Ստեփէ թէմի։

|| Ցորժամ էր ՌՃԿԲ (1713) թիւն Հայոց, Մարտիրոս վարդապետն փոխեաւ յէջմիածին, և գնաց նուիրակ ի Կոստանդնուպոլիս, և անդ վախճանեցաւ։ Լուաք թէ լոյս իջաւ ի վերայ նորա և թաղեցաւ անդ։ Եւ նստաւ յաթոռ անարժան Կիրակոս վարդապետն։ Եւ Առաքել վարդապետն տարեան ի Սևան կղզին և մնաց Զ (6) ամիս։ Եւ ըերեալ էջմիածին, բազում կաշառօք եկն ի Ղափան և բազում ՃՆաս հասոյց սուրբ աթոռոյս. և [ՌՃ]ԿԸ (1719) Թվին բազում չարչարանօք սպանանաւ Ալի Մարտան պէկէն։ 364ա

Ի

Գէդինն որ ժաժ էրե, էրէվան փուլ էրե, Թվին ՌՃԻԸ (1679)-ին էր ունիսի ԻԴ (24)-ին շաբաթ։ Մին այլ որ ժաժ էրե ՌՃԿԵ (1716)-ին էր հունվարի ԻԳ (23) օրն էր[85]։ 2ա

Ցարեգակն որ խավարվեցաւ Թվին Ռ ու ՃԳ (1654) սէկդէբերի Ա (1), օրն չորէքշարտէ[86]։ 4ա

Տէր Սհակն ու Խաչայտուրն որ բաժանվեցաւ ՌՃԾԲ (1703)-ին սէկդէբերի ԺԲ (12)-ին, օրն կիրակի։

Մին այլ որ խավարեցաւ արեգակն Թվին ՌՃԽԸ (1699)ու�սէնտէբերի ԺԳ (13), օրն չորէքշապթէ[87]։

Տէր Ահակի կողայկից Ուղուրսուլթանն որ առ Աստուած փոխվեցաւ Թվին Ռ ու ՃԾ (1701)-ումն էր, նոյեմբերի ամսու ԻԶ (26)-ին, ուրն հի[ն]դշապթէ։ Աստուած ողորմի իւր հոգոյն. ամէն։

Մահմատ Ալի խանին որ պառնութիւնն էկաւ Թվին Ռ ու ՃԾԱ (1702)-ին էր, մայիսի Ե (5)-ումն. որ առ Աստուած փոխվեցաւ ՌՃԾԴ (1705)-ին էր փէտրվարի էրկուսին։

Տէր Սհակի որդի տէր Յակոբին որ հարսանիք արինք, մի- 4բ
չիղեղէցի Միրաքի որդի տէր Մովսէսի դուստր՝ Դարէջանն բե-
բինք թվին ՌՃ ու Կ (1711)-ին հունվարի ԻԱ (21)-ին. Աստուած
բարի վա[յե]լում տայ. ամէն։ Եւ իւր որդի Խաչայտուրն, այլէլ
5 անունն Աղայպայտոյ ՌՃԿԳ (1715) թվին օգոստոսի է (7)-ին,
օրն կիրակի, ծնաւ։

Յետոյ որ Գրիգորին համար քօլայդիրանէցի Արևջանի որդի
Գիրայկոսի աղջիք Քաթանն կողայկից բերինք ՌՃԿԴ (1715)
թվին օգոստոսի Ժ (10)-ին, Աստուած բարի վաելում տայ. ամէն։

10 Գուդչաքի Մարիանն թվին ՌՃԾԱ (1702)-ին հունվարի Զ 5ա
(6)-ուն, ուրն յերեքշապտէ։

Սուլթան Մուրատն որ Էրեէվան առաւ էՃՌ (700.000)
մարդով Թ (9) օրումն, առաւ թվին ՌՁԵ (1636)-ին, էր դէնկդէ-
բերի ամսումն. յետոյ որ շահ Սէպին Էրե[վան] ՀՃՌ (800.000)
15 մարդով Գ (3) ամսումն առաւ թվին ՌՁԷ (1638)-ումն էր, ապ-
բիլի ամսուն էր[88]։

Քալպալի խանն[89], որ էր Գանջու ըէկլարբէկի, սպասալար 6բ
Վրաստանայ, ՃՌ (100.000) մարդով մտաւ Վրաստուն, առաւ
լավ պնայդրութիւն, Լուռու պարոն Թամազդուլի խան արաւ ուռ-
20 տուն, որ գնաց Թիրալէթ, դաղլ էլաւ, Թամազդուլի խանին պուիր-
միշ արաւ վերայ Ցիցու բեռդին, Ռ ու ԲՃ (1200) մարդով գնաց,
ԺԱ (11) ուրումն առաւ բեռդն կամիւն Աստուծոյ թվին ՌՃԽԴ
(1695)-ումն էր, սէդէկբերի ամսումն. ամէն։

|| Պահայտուր խանն, որ է պարոն Լուռու, Ապջայդալու 7ա
25 Էսայ խանին թոռն, Քալպալի խանին որդի, Շահսուլթան Ուսէինն,
որ նաղար արաւ, աւաւ պառնութիւն նորայ թվին ՌՃԾԵ (1706)-ին,
դէկդէբերի ամսին. ամէն։

Կամաւբն Աստուծոյ տէր Սհակի որդի տէր Յակոբն, որ 8ա
օրհնվեցաւ Սարգիս ահրն սրբայգան յեպիսկոպոսի ձեռամբն ի
30 դուռն Սանահնու սուրբ Աստուածածնու, մահն քառասունքումն
հանեց էն տարին, մահն պասեաց աշխարքս, որ սիթամ յեղաւ
Ղարայքիլիսու ՌՃԿԲ (1713) թվին օգոստոսի ԺԸ (18)-ին։ Աստ-
ուած բարով վայելում տայ տէր Յակոբին, որ հնայզանդ լինի Սա-
նահնու առաջնորդին, ով հակառակ լինի այս աւետարանքս խռով
35 նորայ լինի, տէր Սհակի հոգոյն Աստուածածինն բարեխուս լինի.
ամէն։

ԻԱ.

Թվին ՌՁԸ (1639)-ին եկն սուլթան Մուրատն ի Հալապ 100
յուլիս ամսոյ ԺԱ (11), օրն հինգշաբթի, և ելաւ յուլիսի ԻԵ (25),
օրն շաբաթ։

40 Թվին ՌՃԳ (1654)-ին Իպշիր փաշան ի Հալապ էր և Ներսէս
կաթողիկոսն[90] ի Հալապ էր։

Թվին ՌՃԳ (1655) ըղճալալի Հասան բաշան ի Հալապ սպա-
նեցին։

ՌՃԹ (1660) մեծ սղութիւն եղև։

Թվին ՌԺԺԸ (1669) ի մարտ ամսուն՝ ԻԵ (25) օրն սկսաւ մեծ մահն, զոր տէր մեր փրկէսցէ զմեզ ամենայն յորոգայթից. ամէն[91]։

Թվին ՌՃԿ Ե Ա (1712) յունիսի ԺԶ (16) եկաւ Թաշմազ
5 օղլի Սարգիս վարդապետն ի Քիլիս, առ մեզ կեցաւ. Աստուած դինքն անվնաս պահէ. ամէն։

Ուչքիլիսսի առաջնորդ Մխիթար վարդապետին աշակերտ Երեմիայ վարդապետ և իւր աշակերտն տիրացու Ալիքսան եկին Թվին ՌՃԿԲ (1713) նոյեմբերի ԺԸ (18) օրն։

10 Թվին ՌՃԶ Ե Թ (1740)-ին օգոստոսի Ի (20), օրն կիրակին, գնաց մահտեսի Դասպարն ի մօտ Մարտիրոս վարդապետի քովն։ Տայի ողլի մահտեսի Յովանէս, Խորան ողլի մահտեսի Մկրտիչ ողլի Մելքոն Զէլէպի, մահտեսի Գրիգորի որդի Սահակ Զէլէպին։

Թվին 1167 (1718) եկի Մարաշ, աշխարհամատրան երկու-
15 շարթի հիւանդացայ. գութայեցի տէր Ստեփանոսն ուզեց ինձ անէր աղօթքն վասն ժբ ոի ?։ Մայիսի մէկ օրն ականջիս ասին, թէ մեռաւ մահտեսի [Աս.?]ատուրն։

ԻԲ

Էր Թվին ՌՃԿԲ (1713) փետրվարի ԺԵ (15), որ ամուսինն 199ա
իմ առ Աստուած փոխեցաւ, օրն բուն բարէկենդանի կիրակի։

20 Դարձեալ այստի առաջ, Թվին ՌՃԾԹ (1710)-էն մինչև Թվին ՌՃԿԷ (1718)-ը խիստ սով սաստիկ ելաւ, որ մինչև Ը (8) տարի ցորենն լիտրն մէկ ապասէն մինչև Բ (2) ապասի ծախվեց, փառք բարերարին Աստուծոյ։

|| ՌՃԾԲ (1703)-ումն խիստ հիւանդութիւն անկաւ, որ մեր 199բ
25 գեղումն ՃԾ (150) հոգի մեռան, տէրն Քրիստոս հոգիք նոցայ ընդ սրբոց դասին դասեսցէ. ամէն։

Դարձեալ այսմ ամի մեր եկեղեցուն կայծակ տվեց, գմբէթն քանդեց, վասն իմ ծօվացեալ մեղացն։

Դարձեալ այսմ ամի Բ (2) միմէզ եկաւ. Նախչվան, շատ նե-
30 ղութիւն տվին այս տառապեալ քրիստոնէից, որ միայն մեր գեղին ԴՃ (400) թուման գնաց։

Դարձեալ Երևանայ, Նախչվանա խանէրն Բ (2) տարէն մի-չում Դ (4) անգամ փոխվեցան, գեղօրէից շատ շատ խասարաթ տվին, որ գրելու նման չէ։

35 Դարձեալ ՌՃԿԴ (1714)-ումն ըստուպեցիք[92] եկին, դավի արեցին, թէ Սմբաթի աղբիւրի արտերն մերն է, շատ քաշուքաշ արին, որ Բ (2) տարի խանի բէկլարբէկու դռներէ տան չի նըստեցինք, որ ԴՃ (300) թուման մեր գեղին զարար դիպեց։

Դարձեալ ՌՃԿԶ (1717)-ումն միմէզ եկաւ Նախչվան, մէկ
40 տարի նստեց, մեր գեղին ՃԾ (150) թուման գնաց, մեր գեղի գլուխ եկածն գրելով ճար չի ընիլ, որ յետ սորայ չի կարացինք ոտէն գալ։

Թվին ՌՃԿԸ (1719) յունվարի ԺԲ (12) գեղով խայրայխայր շառայշառ մէկ մէկու գիր տվինք, մուշալէ || արինք, քէնտխուտէք 200ա

գնացինք Ղազրին շահի դուռն մեր հալն շահին արզ արեցինք։
տէր Աստուածըն շահի թախտն հաստատ պահէ, ևս ջուղայեցի
սհաթսաղ աղայ Սահակն, որդովք և ընդանեօք ծաղկեալ պա-
հեսցէ մինչ ի կատարած աշխարհի, որ նայ մեզ առաջնորդ ելաւ,
5 որ մեր բողոքն շահի ականջն հասուցրեց, մեր դեղն շահին խա-
զենին վրայ կտրեց, որ այլ Քէնկէրլուի ձեռն չի կայ մեր գեղի
վրայ, մեր բոաղամն հանեցին, մեր մելիքն Կարապետի որդի
Մելքոն էր, որ նայ էր շահին դռանն բոաղամն, վեր առին մեր
դեղէրի դարուղէն։ Սհաթսաղ աղայ Սահակի որդի Սէթ աղէն բոա-
10 ղամովն եկին Թէրվիզ, պատրաստութիւն էինք տեսել, որ գնամք
Երասխ ագին դէմ ու առաջ. գազանաբարոյ ազգն Քէնկէրլուի, այն
գիշերն Զծ (600) աւել ղօշուն եկին, եկեղեցուն Դ (4) կողմն պատե-
ցին, Ցայտնութեան պահոց կիրակի գիշերն էր[93], Թրաւ, Թիվանկով
դռին[94] եկեղեցին շատ մարդ յարալու արին. այս վախտիս լաւ
15 քաչութիւն արինք, ղօշունն փախցրինք. յետ || ոյ Ցարամիշէնց 200բ.
Օվակիմ դուլուլով տվին ըսպանեցին. Ի (2) օրի Թողեցինք ոչ
գեղն մտնին, եզրի տնէրն Ե (5) տուն կրակեցին, յետոյ ուրիշ
գեղացիք եկին, Թէ բարիշութիւն քցեն, մէջն խափվեցանք, ղօ-
շունն բերինք գեղն, ղօնազ արինք այստունց. սարքալէն Ալան
20 բէկին տղ[ա]ն՝ Մէհրալի բէկն էր, Թարխան բէկն էր, յետոյ գեղն
բողոքնալ ընկաւ, ամէն մեր մարդն փախան, շատ օղուլ ուշաղի
ոտնէր ցուրտ տարաւ, գնացին մտին Ցղնայ, շատն փախան Քար-
կապն, դեղումն մարդ չի մնաց։ Քէնկէրլուքն տվին գեղովն ԽԱ
(41) բէլու տուն չափմիշ արեցին, ամէն ապրանքն տարին։ Դեռ
25 ղօշունն գեղումն էր, մեր Սէթ աղէն, մելիքն բոաղամովն այն-
օրին իրիկունն եկին գեղն, ղօշունն փախան. գնացինք մինչև
Բ՝հրուտ[96], Դ (4) ուղտ բռնեցինք մեր մէկ քիչ զատերօվն բերինք.
մեր Ի (20) մարդ առաջ բռնել էին, տարել Նախջիվան, շատ շատ
ջաղայ ին տվել, արզ արեցինք։ Երևանայ բեկլարբէկու յիւր ջառ-
30 չիրաշին ողորկեց, եկաւ Նախչվան, մեր մարդն հանեց, || մէղմէն 201ա
տարած ապրանքէն կէսն հանեց. դեռ ջառչիրաշին Քէնկէրլուից
վրէն մհասուլ էր, ջաղայ էր անում, շահին արզ էինք արել, շա-
հին աղաբբաշին Բ (2) բաբաթ մհասուլ եկին Ճ (100) մարդով
Նախիջվան այլ Քէնկէրլուի բէկլարին ջանին չօքմիշ ելան, հէնց
35 զարպով եկին, որ Երևանայ ջառչիրաշին այլ վախեց փախաւ։

ԻԳ

Թուին ՌՃԶ (1657)-ին Սերաստիոյ դէտն էր Մելքիսեթ 377
վարդապետն[99]։

Թուին ՌՃՀԱ (1722)-ին, յունվար 13-ին, Սերաստիոյ առաջ-
նորդ Դմպուկ Աստուածատուր վարդապետն[97] վախճանեցաւ։ Քոան
40 ամ առաջնորդ լեալ և ի նոյն թուին յունիս 23-ին էին || առաջ- 378
նորդ Սերաստիոյ Առաքել վարդապետն, որ էր Ակնեցի[98] և այժմ
կայ և վարէ զառաջնորդութիւն. տէր տացէ նմա կարողութիւն։

Ցայսմիկ ամի յուլիս ամսոյն Քէքլիկ խոճայ Նիկաղայոսն
աշխարհէն փոխեցաւ։

ԻԴ

Թուին ՌՃ (1651)-ին մահ անկաւ ի Թոխաթ։ 377

Թուին ՌՃԲ (1653) ամին հեղեղ էլաւ, շատ մարդ և անասուն տարաւ, զոր տէր Աստուած փրկեսցէ։

Թուին ՌՃԳ (1654) Ղայամտհալի եկեղեցին է զսուրբ Աննա
5 քակեցին։

Թուին ՌՃԸ (1659) սուրբ Աննտ նորոգեցին. Զարդալէու փաշան քակեց։

Ի Թուին Հայոց ՌՃԿԹ (1720) ամին կրկին նորոգեալ շինեցաւ սուրբ Աննա վանքն՝ երեք փառաւոր խորանիւք է սեղանիւք պայծառացուցեալ, հանդերձ խցերովն ըստ պատշաճի պիտոյից, օժանդակութեամբ ժողովրդոց համայնից, և վերակացութեամբ տէր Մարտիրոս քահանային, որոյ տէր հաստատութիւն
10 և անշարժութիւն տացէ և խնամքն Աստուծոյ միշտ և հանապազ ‖ 378
ի վերայ սորտ լիցի, ի պարծանս և ի ցնծութիւն աղգիս լուսաւորչադաւան մինչ ի կատարած աշխարհիս. ամէն։

Թուին ՌՃՀԲ (1723) ֆէրման բերին զսուրբ Փառասնից եկեղեցին[99] նորոգելու, առին հրաման և նորոգեցին. մինչև ոչ թամամիլն, ժողովեցան Թուխաթու այլազգիքն պմենայն, դրոհ տուեալ հասին ի սուրբ Փառասունք և քակեցին։ Եւ նոյն ամբոխիւն դիմեցին ի սուրբ Աննա վանքն զամենայն ինչ աւար առին և շուտով ոչ քակուիլն այրեցին զամենայն շինուածն յուլիսի 14 օրն. հասաք յուլիսի 30 օրն դեռ ևս ծուխ կու ելանէ. մթթէ տէր կրկին անգամ նորոգելու արժան կանէ։

ԻԵ

Թվին ՌՃՀԴ (1724) Օսմանլուն Էրևան առաւ։ 294ա

Թվին ՌՃՁԴ (1735) Թահնմազն խանըն Էրևան յետ առաւ։

Թվին ՌՃՁԶ (1737) մահ անկաւ աշխարհս։

Թվին ՌՃՂԶ (1747) շահ Նատիրն ըսպանեցին։

Թվին ՌՃՂԸ (1749) Իպրտհիմ միրզէն եկաւ Թավրէզ Ամիր Ասլան սարդարն սպանեց և աշխարհն ամրէց։

Թվին ՌՄԸ (1759) Նոյեմբերի ԺԳ (13) մեծ շարժ եկաւ Նախչվան երկիր։

ԻԶ

Ես...Յիսուսի Քրիստոսի ծառայ Ամթեցի, որ Տիգրանակերտ 465
կոչի, Ղըոպաչի մ[ահտեսի] Բուհիջանի որդի, տիրացու Արգիսս... եկի ի սուրբ Աստուածածին վանքս Զընքշոյ ի Թվին Հայոց
35 ՌՄԺԵ (1766) մայիսի ԻԳ (24), մտի Գասպար աստուածաբան վարդապետի քով միաբան, կացի Բ (2) տարի. յետոյ գնացի տունս, կեցի Բ (2) տարի չընթչութիւն էրի. յետ Բ (2) ամաց եկինք հայրիս, մայրիս, չորս եղբայրիս հետ ուխտ։ Լուսահոգի Գասպալ։ վարդապետ ինձի ու ախպարիս տուեց կարգ դպրութեան ‖ չորս 466
40 աստիճան. նա Աստուծով եղև քահանայ...[100],

Ես տիրացու Դասպար ծառայ սուրբ Աստուածածնայ դուռն էկայ թվին ՌՃՀԵ (1726) ամին։

Զեռնադրուեցայ արեղայ ձեռամբ Նիկողոս վարդապետին թվին ՌՃԶԶ (1737) ամին։

5 Գաւաղան ընկալայ ձեռամբ Նիկողոս վարդապետին թվին ՌՃՂԵ (1746) ամին։

Թվին ՌՃՂԸ (1749) ամին սուրբ Երուսաղէմ գնացի։

Թվին ՌՄԲ (1753) ամին գուբան (գմբէթ) շինեցի ես՝ Դասպար վարդապետս։

10 Թվին ՌՄԴ (1754) վանքին քավկիր բինայ ջաղացքն շինեցի։ Ցայսմ ամին սուրբ Կարապետ գնացի ես՝ Դասպար վարդապետս։

Թվին ՌՄԵ (1756) եղև զրաւ կենաց Նիկողոս վարդապետին և թաղեցաւ վանքն. և առաջնորդեաց իւր ձեռնասուն աշակերտն

15 մարտի Ժ (10), Անառակի կիրակին, Զնքուշցի Դասպար վարդապետ. տեսանողք ասացէք Աստուած իւրեան կարողութիւն տայ և դուք վարձս յԱստուծոյ առնուք։

Թվին ՌՄԹ (1760) մարտ ամսոյ ԺԴ (14), Ղազարու շաբթի երեքշաբթին, Խաչատուր վարդապետ առ Աստուած փոխեցաւ։

20 Թվին ՌՄԺԴ (1764) ես՝ Դասպար վարդապետ[ս] գնացի սուրբ Էջմիածին ձեռնադրեցայ եպիսկոպոս ձեռամբ Սիմէոնի սրբազան կաթողիկոսի։

Թվին ՌՄԻ (1771) աղբիւրն շինեցաւ դէմ սուրբ Աստուածածնի ձեռամբ Դասպար վարդապետի. խմէք զանոյշ ջրիկն,

25 ասացէք Աստուած ողորմի. ամէն։

Ես տէր Գրիգորս Խարբերդցի, Ղուլու գիւղէն, որդի մ[ահտեսի] Տաւնապետի, եկի Զնքուշոյ վանքն կեցի Խ (40) աւր. թվին ՌՄԼԱ (1782) սեպ[տեմբերի] Գ (3) էկայ, հոկ[տեմբերի] ԺԲ (12) էլայ գացի...։

30 Ես՝ Ոսկան... վարդապետս եկի սուրբ ուխտս հրաշալի առ մեծ և առաքինի սրբազան հայրս մեր Դասպար գերիմաստ և զդաւնամիտ բարունապետն։ Տէր Աստուած զինքն հաստատ և անշեղ[ե]լի պահեսցէ ի վերայ սուրբ գահիս...։ 467

Թվին ՌՄ (1751) Զէնքշայ քիլայ ցորեն ԺԴ (14) ղուրուշ

35 ծախաւ։

Թվին ՌՄԱ (1752) յունվար ամսոյ ԻԵ (25) վանքին արտն գարի ցանաւ։

Թվին ՌՄԷ (1758) կրկին սով եղաւ[101] Ամիթ. քիլայ մի ցորեն Կ (60) ղուրուշ, լիտր մի չամիչ Ի (20) ղուրուշ, Զէնքուշի

40 քիլայ մի ցորեն ԼԲ (32) ղուրուշ, քիլայ մի կորեկ ԻԴ (24) ղուրուշ։

Թվին ՌԻԷ (1578) ագռոր աստղ մի եկաւ, չորս ամիս շարժ եղաւ. Բ (2) թագաւոր Պարսից մեռաւ՝ մէկ շահ Իսմայիլ, մէկ շահ Թահմազ։

45 Դարձեալ թվին ՌՃԺԴ (1665) յամսեանն դեկտեմբերի ի մէջ գիշերի ագռոր աստղ մի այլ էկաւ. Թահմազ խանն իր զաւրաւք կորաւ։

Դարձեալ թվին ՌՃԺԴ (1665) յամսեանն յունվարի ադևոր աստդ մի այլ էլաւ։ Զէնքուշայ քիլէ ցորեն Ժ (10) ղուրուշ ծախաւաւ, նուկի մի չամիչ՝ Ժ (10) ստակ։ Թահմազգուլի խանն էկաւ Քարկուտ, Հասան-գալայ աւերեց, գերեց...։

* * *

5 Թվին ՌՄԷ (1758) խիստ կարի սով եղաւ. Զընքշոյ քիլայ ցորեան ԻԷ (27) ղուրուշ եղաւ, կորեկին չարէքն՝ Ի (20) ղուրուշ, լիտր մի չամիչ՝ Բ (2) ղուրուշ, լիտր մի սոխ՝ Ի (20) փարայ, լիտր շողգամ՝ Ի (20) փարայ։ ՑԱՄԻԹ քաղաք՝ չարէք մի ցորեն Ծ (50) ղուրուշ, ամեն բան սոցա պէս, միսին հօխան՝ Ը 167
10 (8) փարայ. շատ մարդ մեռաւ այս սովոյս։ Թրմի ոընտուալ՝ Դ (4) ճըուրդ (?) ծախաւաւ։ Երկանքն կաւ աղային հաց կընէին, թէ Հայ թէ Տաճիկ. յորժամ մայիս ամիսն մտաք՝ Զընքուշոյ քիլայն ցորեն ելաւ || ԼԲ (32) ղուրուշ, Ջերմուկ՝ Կ (60) 168
ղուրուշ։ ԴՃ (400) մարդ Հայոց աղդէն մեռաւ անօթուն՝ Զնքուշոյ մէջ՝ Տաճիկէն մատէ։ Յորժամ յունիս ամիսն մտաք՝ եղաւ
15. քիլայ մի ցորեան Կ (60) ղուրուշ, լիտր մի չամիչ՝ Ե (5) ղուրուշ, լիտր մի շիրիկ իւղ՝ Զ (6) ղուրուշ։ Ը (8) ամիս Զընքուշայ եկեղեցին ոչ կանթեղ վառաւ, ոչ ժամկոչ էլաւ, իբրև ծովու նման կու ծփայր երկիրն վասն մեղաց մերոց։

20 Յայսմ թվին Ներքին Ատիշոյ եկեղեցին այլ այրեցաւ, որ մէկ հատ քար կամ փայտ չի մնաց. Աստուած վերջն բարին կատարէ. ամէն։

Թվին ՌՄԻ (1771) աղրիւրն շինել տուի, ջուրն բերի մէջ բաղչային. Ռ (1000) ղուրուշ խաբջեցի հազիւ կարացի բերել,
25 Դասպար վարդապետս. տէր Աստուած ամենայն յիշատակն ընդունելի առնէ։

Թվին ՌՄԻԷ (1778) բազում չաքուրկայ և կարկուտ էկաւ. կարի դժուար, սով սաստիկ եղաւ, վանքին ութն լիտր չամիչ եկաւ, ութն լիտր գինու շիրայ։

30 Թվին ՌՄԺԲ (1763) ես՝ Դասպար վարդապետս արևելից [կողմի] պարիսպն աւարտեցի, Դ (4) քէսայ տուգանք տուի Մատան [փաշային?]. տէր Աստուած շէն պահէ ժողովրդեան...։

ԻԷ

Թվին ՌՃԺԲ (1763) յուլիս ամսոյ ԻԶ (26), աւրն շաբաթ, 227բ
ելաք գնացաք Ըստամպոլ, ետոյ գնացաք Էտրէնէ, էմր հանեցաք
35 վասն Պաղտատցուն։

Թվին ՌՃԺԴ (1664) Մուստահա փաշան պէղէսթէն շինել երետ Մարզուան քաղաք, ինքն դայիմախամ էր Էտրենէ թագաւորին մաւան։

Թվին ՌՃԹ (1700)-ին մարտ ամսոյ Ը (8)-ին եղև տէր
40 Արութին Երրէոինեայ անուն աղճիկ մի։

Թվին ՌՃԹ (1700)-ին մայիսին Զ (6)-ին հրամանաւն Աստուծոյ մեկ անձրև մի եկաւ, որ Ա (1) սահէթ ալ եկերեր նէ ճրհեղեղ կելար։

Թվին ՌՃԽԹ (1700)-ին, մայիսին ԺԷ (17)-ին, հրամանաւ Աստուծոյ Ա (1) սահէթ քիշէրէ նէ ճրհեղեզ կելէր։

Թվին ՌՃԾԲ (1703)-ին, սուրբ Յակոբայ պաքին ելոյն[103], Մհսրոբին որդոյն՝ մահ[տես]ի Պողոսին յարսանիս եղե. ամէն։

5 Թվին ՌՃԾԸ (1709)-ին փետրվարի ԺԴ (13)-ին առ Աստուած փոխեցաւ Նուրուճանին կինը. Աստուած ողորմի հոգին։

Թվին ՌՃԿԴ (1714)-ին [մ]արտի ամսոյ ԺԲ (12) տէր Արօ-թին իրիցկին առ Աստուած փոխեցօ. Աստուած լուսաւորէ իւր հոգին։

10 Թվին ՌՃԻ (1771) դեկտեմբերի ԺԷ (17), աւրն երկուշաբթի, պսակեցաք զՄեսրոպն հետ Ալէքսանին՝ Դաւթին որդուն, Բ(2)-սին հարսանիքն միատեղ եղև։

Թվին ՌՃԻԲ (1773) փետրվարի ԺԷ (17), օրն երկուշաբթի, եղև Մեսրոպին առաջի տղայ։

15 Թվին ՌՃԻԶ (1777) մայիս ամսոյ ԻԷ (27) առ Աստուած փոխեցաւ [Շ]նաւորն, Աստուած լուսաւորէ։

ԻԸ

ԷշԶ (1331) թուին Հայոց մեր ազգն, յԱնւոյ թագաւորական 677ա
քաղաքէն մերմէ, ելեալք բռնութեամբ Թաթարաց, եկեալ են ի Հաշտրախան և անտի ի Ղռիմ. և յամս ԴՃԶ (480) անդ են մնա-
20 ցեալ վանօրէիւք և եկեղեցեօք։

Թիւն ՌՄԻԷ (1778) մեծ [կ]այսերուհին Ռուսստաց Եկատե-րինէ Երկրորդն մեծի յաղթութեանն Օսմանցւոց զամենայն քրիստոն[եայս] էհան ի Ղռիմու և երեր ի յերկիրս Ռուսստաց՝ [ափ[ն Ազովու՝ Հայք և Յոյնք։

25 Թիւն 1779 յամի Կե]նաբա]ին, Դիմիտրի Ռոստով կոչեցեալ տեղին յետ ազգին Հայոց հաստատուն հրովարտակաւ և ողոր-մութեամբ և մեք անուանեցաք զքաղաքն Նախիջևան։

Թիւն Փրկչին 1781 ապրիլի ԻԱ (21) արկաք զհիմունս քա-ղաքիս Նախիջևանայ օծանելով զչորս քարինս անուամբ չորից
30 Աւետարանչացն և եդաք ի չորս կողմն քաղաքիս։ Ի սոյն յաւ-ուրքս օծաք մէծ փայտեայ եկեղեցի յանուն սուրբ Աստուածած-նին և երկուք եկեղեցեաց հիմն արկաք յանուն սուրբ Համբարձ-մանն Քրիստոսի և սրբոյն Նիկողոսի, արդեամբ լուսանկար մօրն մերոյ սուրբ աթոռոյն Էջմիածնի և յայլ հոգևորականաց. աշխա-
35 տեցանք մեր ի վերա քաղաքիս ի սկզբանէ մինչև հիմնարկու-թիւնն[103]։ Կարօտի այլոց պատմագրաց, մեք զթիւս զայս նշա-նեցաք վասն տեղեկութեան ապագայիցդ, գիտացեալ այսու զմեր տաժանեալք գործն. յիշեսջիք ի յաղօթս ձեր զսանահնեցի Յով-սեփ արքեպիսկոպոսս Արղութեանց և զհոգևոր ծնօղն իմ զտէր
40 Աիմէօն կաթողիկոսն ամէնայն Հայոց և զնորոգ լուսաւորիչն ազգիս մերոյ և զմարմնաւոր ծնօղսն իմ զՇիօշբէգն և զՔէթէ-վանն. յիշողացդ և յիշեցելոց ողորմեսցի տէր. ամէն։

Ի 1780 թուին Փրկչի և ի մերս ՌՄԻԹ մեծ կայսերուհին շնոր-հեաց մեզ խաչ և պատկեր պարանոցի մեծագին և կարգեաց ռոճիկ։

Թվին ՌՄԽԷ (1798) էր, որ մահն եկաւ ամէն երկիր, Գանջայ կոտորէց, յունիսի ամսեան սկսեց մինչ ի մին տարին կոտորեց, յետոյ Աստուած խղճոյց աղատեց, վերացաւ ցաւն։ 1ա

Թվին ՌՄԽԷ (1798) էր նոյեմպերի ԻԲ (22), օրն շաբաթ, Հրեշտակապետաց տօն օրն, ծնաւ Գապրիլն, մահի տարին էր։

Լա[ն]կ Թամուրի գալն Թվին ՊՃԼԶ (1387), աղգաւ Թաթար ի Սամարղանտայ։

Թվին ՌՄԽԲ (1793) ապրելի ԺԵ (15), օրն ուրբաթ, իրիկուն էր, ծնաւ Մկրտումին որդի՝ անունն Ավաքչան, Աստուած ամուր ձեռօք պահեսցէ ի խորին ծերութիւնն. ամէն։

ՌՄԽԲ (1793) ապրելի ԺԹ (19), օրն երեքշաբաթ, Ջավաթխանը գնաց Շամշատին Ալի ուլթանին թե փոնի, չկարաց, շատ ղօչաղութիւն արաւ, Կանջի մարգին ակլորացրուց պաց թողեց։ Ջավաթխանը շատ եասարութիւն արաւ, փախաւ եկաւ Գանջայ։

ՌՄԽԴ (1795) հոգեմպերի ԻԹ (29), երեքշաբաթ գիշերն, ծնաւ Զանազանը։

ՌՄԽԴ (1795) յունիսի Ի (20) էր Աղայմամատ խանն, որ էր Ախտայ խան կասեին, եկաւ Շուշի վերայ, շատ քրիստոնեայ գերի արաւ, Գ (3) ամիս նստեցաւ Շուշի վերայ, չի կարաց առնի, հետ դարձուց եկաւ, աշնանային էր, Թիֆլիզ քաղաքի վերայ, առաւ քաղաքն, ինչ որ քրիստոնեայ կար տիվ գերի արաւ, շատ գերի կար, պերին Կանջայ ծախեցին, ԺԵՌ (15000) գերի ասին։

Թվին ՌՄԽԵ (1796) էր որ Ջավատխան Կանջայ նստեր, զալայպանա արաւ, էրէկ Լէխանը, Իպրահիմ խանը, Լակղին, Շաքու ղոշունը տիվ հավաքվեցան Ջավաթ[խ]անը փոնեն, չի կարացին, շատ աւերեցին, ամէն կողմըն գերի արեցին. մարդի ամիսն Ի (20) էր մտանք զալեն, յուլիսի ԻԱ (21) դուրս եկանք, շատ, անչափ կոտորվեցան։

Թվին ՌՄԽԵ (1796) դեկտեմպերի ԺԳ (13) էր, որ Ուռուսն եկաւ Կանջու զալում նստեց. Ջավաթխան էր խան, տուրս արաւ, ինչ որ զալումն մարդ, դուն կայ ամէն դուրս արաւ։

Թվին ՌՄԽԶ (1797) յունիսի Ի (20) էր, որ մեկել Աղայմամատ խանն եկաւ Շուշի առաւ, մեչն նստէց, իւրան նոքոր գլուխն գտրեց ողորկեց Տաղստան, շատ մասխարայ ելաւ[104]։

Լ

Ի Թվին ՌՄԺԴ (1765)-ին ոչ եկաւ ձուն մինչև փետրվարի ԺԵ (15)-ին։ 207բ

Թվին ՌՄԺԹ (1770)-ին երկիրն Արզրումու այնպէս ժաժ ելաւ, բոլոր բովանդակ գեղան անցաւ, Հասանղալաու պարիսպներ ըլաւ, հոգտեներերի ամսոյն.

Թվին ՌՄԺԹ (1770)-ին ես մեղաւոր և անարժան տիրացու Մարքարս ամուսնացա փետրվարի Ը (8)-ին, միրունքս թողի նոյներերին։

Թվին ՌՄԽԶ (1797) ես տիրացու Մկրտիչզ գիր սորվեցայ[105]։

ԼԱ

Աստծով Թվին ՌՄՃԽԴ (1794)-ին ամսանը յուլիսի ԻԵ (25)-ին շահրն եկաւ Երևան առաւ։ 389բ

Թվականին ՌՄՃԽԴ (1795)-ին Դայսարէն քանտեց, գնաց Թիւլիզ քաղաքն առաւ, եսիր ու Թօպներն բերեց, տարաւ Թէհրան հասցրուց Աղայմամատ խանըն։

ԼԲ

Եւ ի Թվին Հայոց Կ (611) էր, որ երևեցաւ Մահմատն Տաճկաց։ 85բ

Թվին Հայոց ՉԲ (1453) էր, որ ելաւ պեղծն և որդին կորբստեան սուլթան Մահմատն և էառ զԿոսդանդինպօլիսն ի ձեռացէն Յունաց։

Թվին Հայոց ՉՂԹ (1550) զԱրզրում քաղաքն աղտի որդիքն պատիւ կանչեցին խարկանօք, մէկ գիշերն Հ (70) ոգի ջարգեցին, մեծ սուգ 'եղև, զԹորԹոմու ձորերն տիրեցին և զամենայն Վրաստուն ձեռամբ Տաճկաց արարին[106]։

Ի Թվականիս Հայոց ՄԽԵ (796) երկու եղբարք՝ Սահակ և Յովսէփ կատարեցան ի Քրիստոս, խոստովանելով զհայր և զորդի և զսուրբ հոգին, ի քաղաքն Կարնոյ, որ այժմ Արզրում ասի, ձեռամբ իսմայելացու բռնաւորին, որք են Տաճիկ, յարացի ԺԵ (15), յաւուր հինգշաբԹի[107]։

Ի ՄԾԶ (807) Թվին սով եղև ընդհանուր աշխարհ, ի մին քաղաքս Կարնոյ գտան մեռեալք Ա (1) օրն ԴՌ (3000)։ Եկն Թշնամին Յոսկի դուռն և առին բաղում քաղաք։

ԼԳ

Ի Թվին ՊԼԵ (1386) Լանկի Թամուրն եկաւ Թաւրէժ շրջեալ ընդ յամենայն տեղիս։ 123ա

Ի Թվին ՊԾԲ (1403) շինեաց քաղաք մի Բաղաղայ անուն։ Յաւուրս տօնի Հրեշտակապետացն եկն ձիւն։ ԴՌ (4000) անձինք նոր քաղաքէն ամենեքեան էին զօրացն իւր[108]. և չուեալ գնաց յերկիրն իւր անդրէն սատակեցաւ։ Բայց եկաց ի Դրուցէ[109] Թիւն ԺԸ (18) ամ. յելանելն աշխարհս և գնալ շրջիլ ԺԸ (18) ամ եղև, չատ աւերս արար։

Ի Թվին ՊԼԵ (1386) Թուրքն էառ զբերԹն Որոտան, Կախիկ վարդապետն փախաւ ի Ծարայ։

Թվին ՊԽԲ (1393) զԴէոսկորոսն սպան ի Սիս. տէր Դէոսկորոսն սպանին, Նստաւ տեղի նորա Բոկիկ վարդապետն՝ Կարապետն[110]։

Եւ ի նոյն ամին քարկոծ արարին յՈստան Զաքտրիայ ԱղԹամարայ կաԹողիկոսն։ Նստաւ Բոկիկ Կարապետն Դէոսկորոսի տեղն։

Ի Թվականիս Հայոց ՇԼԱ (1082) ամին մոլորեցան զսուրբ 123բ

Զատիկն Ժ (10) աղդ հաւատացելոց, Հայք և Ասորիք ուղիղ կացին։

Ի սկիզբն շբջանի Շ (500)-եկին Դ (4) բաժանեցաւ կաթուղիկոսութիւնն Հայոց՝ տէր Վահրամ յԵգիպտոս, տէր Բարսեղ
5 յԱնի, տէր Պողոս, հայրն Վարագայ, ի Մարաշ, տէր Թորոս ի Հենի[111],

Թվին Քրիստոսի ՉԾԱ (751) փոքր Մահմէտ էառ զՀայս և զՊարսիկս։

ՉԾԴ (1305) պատառուեն Զատկին։ Սոյն ժամանակս Կոստանդին, որդի Լևոնի, որ կոչեցաւ Կաւալինոս, այսինքն Թրքաժողով, ժողովեաց [Թրիք և] ձգեց ծովն, Տաճիկք տեսեալ երկեան,
10 փախեան. ասեն թէ Ե (5) առուծ Ա (1) օր զկնի միմեանց սպանեալ սորա։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՈՒՆՆԵՐ

1. Ցուցակում, փակագծերի մեջ, Տիրայր վարդապետն այնուհետև ավելացնում է, «չկայ այդ վերոյանուանեալ կտորը»։

2. Փակագծերում հայոց «ՉԺՂԹ»-ին համապատասխան նշված է 1247։ այդ սխալ է, ուստի ուղղեցինք։

3. Հեթում Լամբրոնացին, Կոստանդին Լամբրոնացու որդին, Հեթում Բ թագավորի պապն էր՝ մոր գծով։ Հեթում Բ-ն իր տարեգրության մեջ նշում է, որ 1250 թ. հունիսի 29-ին «կատաբեցաւ ի սորայ պապն իմ և տէրն Լամբրոնի» (Մծ, 1, էջ 81)։ Հետևելով Ալիշանին, այս վկայությունը հասկացել էինք ոչ թե Հեթում Լամբրոնացու այլ սրա հոր, Կոստանդին Լամբրոնացու վերաբերյալ (նույն տեղում, էջ 69, հմմտ. «Սիսուան», էջ 85)։ Հեթում Լամբրոնացու մահվան թիվը հայտնի չլինելու պատճառով Ալիշանը նշում է մինչև 1285 թիվը (նույն տեղում, էջ 85)։ Ըստ երևույթին, ինչպես հիմա է պարզվում, 1250 թվին սպանվել է Հեթում Լամբրոնացին և սրա հայր Կոստանդին Լամբրոնացին։ Հեթում Բ-ի տարեգրության վերոբերյալ հատվածի (Մծ, 1, էջ 81)-«ի սորայ» բառը պետք է համարել «ի սրոյ» բառի աղճատում։

4. Բնագրում գրված է. «յունվար ի Գ (3)»։ Սակայն մի ուրիշ վկայության մեջ կարդում ենք. «Եւ ի թվին ՉԱ (1252) և յունվար ԻԳ (23), որ էր աւր երեքշաբթի հանգեաւ... Զապէլ թագուհին...» (Մատենադարանի արխիվ, ֆոնդ Տիրայր վարդապետի, թգթ. № 119, վավ. 1գ, էջ 288)։ Եթե հաստատ է «երեքշաբթի» վկայությունը, այն ժամանակ հունվարի 23-ը պետք է ուղղել 22։

5. Լուսանցքում ավելացված է. «որ է Եղիսաբէթ»։

6. Բնագրում, փակագծերի մեջ սխալմամբ գրված է 1261։ Հեթում Ա-ի մահվան ժամանակի մասին տե՛ս վերևում, էջ 167, ծանոթ. 148։

7. Այստեղ ակնարկում է Բուզայի դավադրությունը, բայց սա Արղունից հետո չի իշխել (մանրամասն տե՛ս Մծ, 1, էջ 48—49)։

8 Փակագծերի մեջ նշված է 1130։ Խոսքը վերաբերում է արաբների արշավանքին (տե՛ս Մծ, 1, էջ 24)։

9. Հմմտ. Մծ, 1, էջ 78։ Խոսքը վերաբերում է խաչակիրների կողմից Կ. Պոլսի գրավմանը, սակայն այն տեղի է ունեցել 1204 թվի ապրիլի 12-ին (տե՛ս Մծ, 1, էջ 53, ծանոթ. 15)։

10. Տե՛ս Մծ, 1, էջ 26, 30, ծանոթ. 30։

11. Տե՛ս Մծ, 1, էջ 41։ Ավագի մահը սխալ է նշված, ուրիշները, իրավամբ, դնում են 1249—1250 թթ. (Մծ, 1, էջ 42, 58, ծանոթ. 58)։

12. Տե՛ս Մծ, 1, էջ 25, 148։

13. Իմա հուլաու։

14. Նկատի ունի 1266 թ. Մառիի ճակատամարտը, որտեղ Հեթում Ա-ի որդիներից Թորոսն սպանվեց, իսկ Լևոնը գերվեց (տես վերևում, էջ 73)։

15. Խոսքը հավանաբար վերաբերում է եգիպտական սուլթան Բեյբարսի Կիլիկիա կատարած արշավանքին։

16. Բնագրում «թվին ՉԺԸ շարժ թվ. ՉԺԹ եղաւ» ձևով։ Միաքը մնում է անիմաստ, ուստի նպատակահարմար գտանք «թվ. ՉԺԹ» հատվածը հանել, բացի դրանից, ավելի վերջաշարժ Կիլիկիայում իրոք եղել է 1269 թվին («Սիսուան», էջ 555)։

17. Նշված բառից հետո բնագրում երկու-երեք բառի տեղ բաց է թողնված։

18. Բնագրում այդպես։

19. Գուցե Լամբրոն։

20. Այնուհետև միջանկյալ թվաբանական խնդիր, որից հետո բնագիրը շարունակվում է։

21. Տես Մծ, 1, էջ 88–89։

22. Բնագրում սխալմամբ տպված է «նոյն»։

23. Այնուհետև հաջորդում է. «Ստեփաննոսն իմ եղբայր» բառերը։

24. Բնագրում «սպաւուոր» ձևով։

25. Կարելի է կարդալ նաև «Ղաղոխուան»։

26. Կարելի է կարդալ նաև «զանեերոյն»։

27. Աստղաբաշխական տվյալները հաստատում են այս վկայությունը („Canon der Finsternisse", էջ 248)։

28. Աստղաբաշխական տվյալները հաստատում են այս տեղեկությունը (նույն տեղում, էջ 248)։

29. Տես նույն տեղում, էջ 365։

30. Ըստ Օպպոլցերի հաշվումների լուսինը խավարել է 1386 թվի հուլիսի 12-ին (նույն տեղում, էջ 365)։ Բացի դրանից, 1386 թվի մայիսի 21-ը կլինի երկուշաբթի և ոչ թե հինգշաբթի։

31. Տես վերևում Ն. Պալիենցու մոտ, էջ 177։ Տիվրիկ գավառի Օթմնա վանքում 1348թ. ընդօրինակած Մաշտոցի հիշատակարանում կարդում ենք. «...Արդ՝ ազաչեմ չմեղադրել ոգալանաց... բանդի տեսանէաք զբազում դիկունս մարդկան մեռեալս առաջի մեր, և ցնդէր միտս իմ իբրև զվայրենագնաց գազան և հազիւ առ իս ժողովէի յերկիւղէ մահուն, եթէ ոչ ժամանէի յաւարտումն տառիս...» (ՀՁՀ, էջ 360)։

32. Տե՛ս վերևում, Ն. Պալիենցու մոտ, էջ 177։

33. Այս և հետագա դեպքերի մասին մանրամասն պատմվում է ժամանակագրի մի հիշատակարանում. «Ի թվին հայոց ՊԼԵ (1386) Լանկ Թամուր եկն ի Թավրէզ և ի Նախչուան և անտի ի միում աւուր կալօ մինչև ի Կարբի և ի Բճնի, ի Գառնի և ի Սուրմարի, ի Կոզբ և անտի գնաց ի Վրաց տուն. և արար զազայ գՏփխիս քաղաք. և կալեալ զԹագաւորն Բագրատ տաճկացոյց. և գնացեալ ձմերեաց ի Մուղան։ Եւ ի գալ տարոյն յօուր աւագ զասկին, եւ ի Սիւնիս և սպռեալ տարածեցաւ և գնաց հետ Թուրքմանին մինչև ի Համթայ ջուրն, և դարձեալ եկն ի վերայ Վանայ և խաբեաց զնա զօուրս քսան և հինգ և առեալ զնա յօուր ԻԶ (26)-ոջ յաթոռոյ ս. Յակոբ և զամենայն ի բերդն, ի վայր ելից էՌ (7060) մարդ։ Եւ անց գնաց ի Սմբղանդ. և յետ Զ (6) տարու դարձեալ եկն ի Գուրս Թամուրն և էջ ի Գազատատ և անդ կոտորեաց բազում մարդիկ. և մարդու գլխով Ա (1) մինարէ շինեաց. և գնաց ի Միջագէտս Ասորոց և անդ կոտորեաց բազում մարդիկ։ Եւ էր որդի սուլթան Ահմատին ի բերդն Երզնկոյ և եկեալ Վրացիքն տարան. և լսեց Թամուրն և բարկացեալ եկն ի Գուրս մեծ բարկութեամբ և գնաց ի Վրաց տունն. շատ աւեր և վնաս արար, սրով և գերութեամբ քակեաց զմեծամեծ եկեղեցիս ի Տփխիս. և անտի էջ ի Շամտուն և գնաց մօտեցաւ Երուսաղէմայ, բայց անդ ոչ եմուտ և դարձաւ բազում աւարաւ. և գնաց ի Թախան։ Եկն ի Սեբաստեայ և բազում կենդանիս թագեաց աւելի քան զԲՌ (2600) և դարձաւ տեղի իւր։ Եւ ի միւսում տարին գնաց ի Հոռոմաց տունն և էառ զԿամախ և այլ բազում տեղիս և ի միւս այլ տարին դարձաւ ի Հոռոմս և զՀլարումն խանն կալաւ, որ ունէր անթիւ հեծեալս և տնհամար զաւրս ցրուեաց և գերեաց զամենեսեան...»։

34. Բնագրում տարեթվի վերջին երկու տառը՝ «ԵԹ» հազիվ է նշմարվում։

35. Անանուն մի հեղինակ Ջանիբեկի կողմից Կաֆայի պաշարումը նշում է 1343 թ. սեպտեմբերի 23-ից, իսկ նվաճումը՝ 1345 թ. մարտի 25-ին (տե՛ս Մծ, 1, էջ 116, 112, ծանոթ. 10)։

36. Տե՛ս վերևում, էջ 177։

37. Խոսքը վերաբերում է Թամուրտաշի որդի Աշրաֆի սպանությանը (հմմտ. Մծ, 1, էջ 118, 121, ծանոթ. 16)։ Ժամանակագրի մեկը 1258 թվի հիշատակարանում գրում է այդ մասին տե՛ս ՀՁՀ, էջ 433։

38. Ժամանակագրի մեկը ճշտում է այս դեպքը. «Ի թվականս հայոց ՋԻԴ (1475). յունիս ամսոյ Զ (6) խամայէլցիքն առին զԿաֆայն..» (Ms 7831, էջ 205ա)։

39. Տե՛ս և հմմտ. Մծ, 1, էջ 110։

40. Տե՛ս նույն տեղում, էջ 110։

41. Տե՛ս նույն տեղում, էջ 110։

42. Տե՛ս նույն տեղում, էջ 119, 124, ծանոթ. 43։ Այս վկայությունից հետո սկսվում է Կիրակոս Բանասերի հիշատակարանը։ Այս հիշատակարանի և № 582 ձեռագրի ժամանակագրության ձեռագիրը նույնն է, գրանով հաստատվում է մեր այն ենթադրությունը, թե Կիրակոս Ռշտունցու անունով հրապարակված ժամանակագրության երեք առանձին հատվածները իրար միացրել և Մատենադարանի № 582 ձեռագրում ընդօրինակել է Կիրակոս Բանասերը (Մծ, 1, էջ 114)։ Սակայն հնարավոր է, որ Կիրակոս Ռշտունցին և Կիրակոս Բանասերը միևնույն անձնավորությունը լինեն, թեև դրա համար հավաստի և հաստատ կռվաններ չունենք։

43. Նկատի ունի Շամշուլդեի գրավումը։ Տե՛ս վերևում, էջ 514, Մծ, 1, էջ 124, ծանոթ. 43։

44. Այս դեպքն ուրիշները նշում են 1440 թվին (Մծ, 1, էջ 143)։

45. Խոսքը վերաբերում է Իսմայիլ I-ի և, Ուզուն Հասանի թոռ, Ալվանդի կռվին (տե՛ս Մծ, 1, էջ 195, 108, ծանոթ. 23—24)։

46. Նկատի ունի Սելիմ I-ի և Իսմայիլ I-ի միջև տեղի ունեցած Ջալդիրանի ճակատամարտը։

47. Տե՛ս և հմմտ. Մծ, 1, էջ 195, 323։

48. Կորեկի մի տեսակ։ Բնագրի «մի կկլ» պետք է հասկանալ մի չարեք կրկնել, ինչպես մյուս մթերքների մասին է ասված։

49. Տարեթիվը սխալ է նշված, այն պետք է լինի ՊԼԶ (1387), թեև Թամուրն այս թվին դեռ Հայաստանում էր։ Սեբաստիա և այլ վայրեր նա գնաց ու գրավեց 1401 թվին։ Այդ մասին է պատմում Մատենադարանի № 5707 (էջ 1ա) ձեռագրի հիշատակարանը։

50. Իմա՛, սուլթան Մուհամմեդ III-ը։

51. Տե՛ս և հմմտ. վերևում, էջ 278, ծանոթ. 57, Մծ, 1, էջ 160։

52. Նաև Արեշ, Շիրվանի խանության նշանավոր քաղաքներից և գավառներից մեկը։

53. Տե՛ս և հմմտ. վերևում, էջ 267, 394։

54. Այսինքն՝ 1598 թվին։

55. Այս վկայությունը լրացվում է 1006 թվին, Խիզանում, գրված մի հիշատակարանի տեղեկություններով. «Ի թուականիս Հայոց Ռ և Մն (1606) ամին..., եղև աւարտումն ս. գրքիս ի դառն և ի նեղ ժամանակիս, որում նեղիմք ի բռնութենէ և ի սաստկութենէ այլազգեաց և յանօրինաց, զի կայ ի մէջ աշխարհիս բազում նեղութիւն և պատուհաս՝ սով սաստիկ։ սուր անխնայ, գերութիւն անողորմ, աւերումն աշխարհաց և քանդումն գեւղօրէից, կոծանումն տանց և շարժումն յերկրէ յերկիր և ոչ գտանէին բնաւ հանգիստ, զի ի մայրաքաղաքէն Ատամբօլայ մինչ յայս աշխարհս ուրեք չինութեան ոչ գտանիւր ոչ ի քաղաք և ոչ ի գեւղ, ոչ ի լերինս և ոչ ի դաշտս. և է յայսմ տեղիս յամենայն իրաց պակասութիւն, քանզի քիլայ ցորէն Զ (0) կարմիր է, լիտր ալեւրն Լ (30) շահի, լիտր եւղն Դ (3) զռօշ, լիտր բռուպն և չամիչն ի կարմիր մի և այլ ամենայն ինչ նմանապէս սոցա, իմացիր, որ հաղիւ ի ձեռք անկանի, որ բազումք ի սովոյ և ի ցրտոյ մեռանէին ի տունս և ի դուրս, ի փողոցս և ի հրապարակս։ Եւ ի յայսմ աւուրս յուրաթի օրս լսեցաք, որ ԺԲ (12) ոգի ի մի փութկայէ ի դուրս բերին մեռեալ և չորացեալ ի սովոյ և ի ցրտոյ և ոչ գիտէին զանհաւատն և դհաւատացեալսն։ Եւ այս ամենայն եղև ի շարժել Բ (2) մեծ թագաւորացն արևելեան և արևմտեան,...» (№ 4721, էջ 655բ)։

56. Այստեղից գտնում ենք Ա. Դավրիժեցու մոտ (էջ 86—87)։ Նախքան ջալալիներին թվելը, Առաքել Դաւրիժեցին գրում է. «Թէ որքան եղեալ է և զոր ինչ լուաք յականատես պատմողաց՝ զայն գրեմք» (էջ 86)։ Մյուս կողմից այս ժամանակագրության հեղինակը ժամանակակից է և ականատես իր նկարագրած դեպքերին, նշանակում է ջալալիների մասին մենք ունենք մի ուրիշ սկզբնաղբյուր։

57. Առաքել Դավրիժեցու մոտ այս հատվածը հետևյալ կերպ է գրված. «Ջանփօլատ Օղլի Ալի փաշայ։ Սորին եղբայրն՝ զորոյ անունն ոչ գտաք, Քոռօղլի, այս այն Քոռօղլին է, որ բազում խաղ է ասացեալ՝ զոր այժմ աշղներն եղանակեն» (էջ 87)։ Զարմանալին, սակայն, այն է, որ Աբաս I-ի արքունական պատմիչ Մունշիի տեղեկություններում Քոռօղլու անունը չի հիշվում, որպես ջալալիի (Իսկանդար բեկ Թորքման (Մունշի), Թարիխ Ալամարա Աբբասի, մաս II, Մատենադարանի պարսկերեն ձեռագրերի ֆոնդ, № 2, էջ 218բ—226ա, այս տեղեկությունը շնորհակալությամբ վերցրեցինք բնկ. Հ. Փափազյանից)։

58. Իմա՛ Միջերկրական ծով։

59. Բնագրում սխալմամբ գրված է «ՌՄՀ», բայց շարունակությունից պարզ երևում է, որ այն պիտի լինի «ՌՄԵ», ուստի ուղղեցինք։

60. Տե՛ս Մծ, 1, էջ 171—172, վերևում, էջ 266—267, 355։

61. Տե՛ս նույն տեղում, էջ 172, վերևում, էջ 267, 275 ծանոթ. 36։

62. Տե՛ս նույն տեղում, էջ 172, վերևում, էջ 267։

63. Տե՛ս նույն տեղում, էջ 173, վերևում, էջ 245, 253 ծանոթ. 31։

64. Տե՛ս նույն տեղում, էջ 173։

65. «Հանդէս Ամսօրեայ»-ի բնագրում այսպես. «Բ սարնյեան գանց էառ»։

66. Հմմտ. Մծ, 1, էջ 145։

67. Այս վկայությունը հաստատում է մի այլ ժամանակագիր (Մծ, 1, էջ 145), սակայն «Հանդէս Ամսօրեայ»-ի բնագրում այս վկայությունը այլ կերպ է գրված. «Ի նոյն երկրորդ ամին (1625 թ. հետո. Վ. Հ.) գօրչի պէյին էկն Վրաստանն ձեռվ։

68. «Հանդէս Ամսօրեայ»-ի բնագրում այսպես. «Թվին ՌԶԱ Դաւուս խանն զօնմիշ եղև, թվին ՌԶԳ։ դարձեալ մահ եկն և միւս ամին Դաւուք խանն էառ գլոնթ ահրն եկն ի վերայ Էրևվնա էառ բռնութեամբ»։

00. Գրոֆ. Օպպոլցերի հաշվումներով արևը խավարել է 1653 թ. օգոստոսի 23-ին, 1654 թվին՝ օգոստոսի 12-ին, իսկ 1655 թվին օգոստոսի 2-ին («Canon der Finsternisse» էջ 272)։ Իսկ 1655 թ. օգոստոսի 2-ն իրոք չորեքշաբթի է։

70. Տե՛ս և՝ հմմտ. Մծ, 1, էջ 145։

71. Տե՛ս և հմմտ. նույն տեղում, էջ 145։

72. Այս վկայությունն ավելացրել է մեկ ուրիշը։

73. Կարելի է կարդալ նաև «Զրքասուռ»։ Այս բնակավայրը հավանաբար հին Տասվիլ (նաև Տասուլ, Տերսուլ) գյուղն է, որը, ինչպես ցույց է տալիս ակադ. Հ. Մանանդյանը, ընկած է Խոյից-Գարսք (Paresaca) տանող ճանապարհի վրա, "ուրմիա լճից մի փոքր հյուսիս։ («Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Գեմտինգերյան քարտեզի», Երևան, 1930, էջ 164—165)։

74. Բնագրում տառերը խառնված են. կարելի է կարդալ նաև «ՃԾ ՁՌ»։

75. Իմա, Թահմազ II։

76. Իմա, Արարատյան դաշտ։

77. Հավանաբար խոսքը վերաբերում է Մշո դաշտում գտնվող Ծղակ գյուղին։

78. Բնագրում «Թվին» բառին նախորդում է «Ցիշեցեք ի Քրիստոս զըստացող դրոյս, որ կոչի Ալբերթ, որ» հատվածը։

79. Իմա «Հոռոմաց (Հռոմաց) տունն», այսինքն Թուրքիա։ Նույն անձնավորությունը մի այլ ձեռագրում հետևյալն է գրել. «Ի Թվին ՌՃԽԹ (1700) սուրբ Ցակօբայ հայրապետին եկեղեցին ձեռնարկինք շինելոյ...։ Ցունիսի ամսոյն ԻԶ (26) տէր Բարսեղն գնաց Հորմաց տունն։ Եւ յուլիսի ԺԹ (19) տէր Ցակօբ գնաց դէպի Ղափանն, ես մեզաւոր տէր Ոսկանս միայն մնացի...» № 1288, էջ 508բ։

80. Եթե այդ վերագրածը տեղի է ունեցել 1696 թվին, ապա Խաչի տոնը այդ տարին կլինի սեպտեմբերի 13-ին։

81. Մի ուրիշ հիշատակագիր հաստատում է այս վկայությունը. «...Թվին ՌՃՄԸ (1709)-ին անասնոց ցաւ անկաւ արևմուտ և արևել, ամենայն տեղիս անթիւ և անհամար ջարդ եղև, սակաւ սակաւ զերծանէին մինչ որ Թվին ՌՃՀԱ (1722), որ այս դիրք կազմեցաք ոչ է վերչացեալ, տեղիս տեղիս մեռանին ի ցաւոյ» (№ 3389, էջ 326ա)։ Տե՛ս նաև ԺԹ-ում։ Այս դեպքը արձանագրվել է նաև այժմյան Ղուկասյանի (հնում Ղայդուլի) Ղազանչի գյուղում։ Ժամանակակցի մեկը ահա թե ինչ է գրում 1709 թ. ընդօրինակված Հայսմավուրքի մեջ. «Եւ խիստ մեծ ցասում եղև, զոր էր տեսիս աշխարհիս, այսպիս ցասումահսվա [s!] տաւարի եղանց, զոր ոչ եղեալ էր այսպիս բանն, անչափելի կոտորեցաւ...» (№ 9223, ԿԱ)։ Ինչպես այս վկայություններն են ցույց տալիս, այս մահը մոլեգնել է բավական ընդարձակ տերիտորիաներ։

82. Բնագրում նախքան ժամանակագրությունը միևնույն ձեռագրով գրված է. «Ցիշատակ է գիրգս Կիրակոս վարդապետինն»։

83. Բնագրում «ՁԹ» ձևով։ Հավանաբար պետք է լինի Բաղաբերդի Զաթու գյուղը։

84. Տե՛ս ծանոթ. 81։

85. Բնագրում 3ա և բ էջերում գրված է Մահակ քահանայի գերդաստանի անդամների ծնունդների և մահվան ցանկը, որն ավելորդ համարեցինք բերել։

86. Աստղաբաշխական տվյալները չեն հաստատում այս վկայությունը, որոնց համաձայն արևը 1054 թվին խավարել է փետրվարի 17-ին և օգոստոսի 12-ին («Canon der Finsternisse», էջ 272)։ Սխալ է վկայության այն մասը, որ իբր 1054 թվի սեպտեմբերի 1-ը չորեքշաբթի է։ իրականում այն ուրբաթ է։

87. Համաձայն աստղաբաշխական տվյալների արևի խավարումը տեղի է ունեցել 1699 թվի սեպտեմբերի 23-ին հինգշաբթի։ Բայց եթե հաստատ է բնագրի սեպտեմբերի 13-ը, ապա անհրաժեշտ է տարեթիվը ուղղել 1700, այդ դեպքում սեպտեմբերի 13-ը կլինի երեքշաբթի (հմմտ. «Canon der Finsternisse» էջ 278)։

88. Տե՛ս և հմմտ. Մծ, 1, էջ 196, 199, ծանոթ. 39, վերևում էջ 395։

89. Սրա մասին մի այլ վկայություն էլ տե՛ս Մծ, 1, էջ 289։

90. Ներսես Սեբաստացի, Սսի կաթողիկոս։ Մի ժամանակագիր, սրա մահը նշում է 1655 թ. (Մծ, 1, էջ 203, 204, ծանոթ. 1)։

91. Այնուհետև հաջորդում է հետևյալ հատվածը. «Վաւէրական, որ է մատանի, Փալուի քովն է, սանճախ և դաղ գեղ շաքարլուն»։

92. Իմա, Ստուպ գյուղը, որը զտնվել է Ցղնայից մի փոքր հյուսիս։

93. Այսինքն 1719 թ. հունվարի 4-ի լույս 5-ի գիշերը։

94. Այս բառը կարդացել ենք ենթադրաբար, պարզ գրված չլինելու պատճառով։ Հեղինակը երևի ուզում է ասել եկեղեցու դուրսը՝ բակում, շատերին վիրավորեցին։

95. Իմա Փխրուտ, Փառակայից արևմուտք, Նախիջևանի ճանապարհի վրա։

96. Սրա մասին բավական մանրամասն տե՛ս Հով. Սեբաստացու մոտ («Դիւան», գիրք Ժ, էջ 403—404)։

97. Առավել մանրամասն տե՛ս նույն հեղինակի մոտ (նույն տեղում, էջ 400—408)։

98. Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 408—416։

99. Սեբաստիայում է։

100. Բնագրում գտնվում է 1801 թվի մի աննշան վկայություն, որը չվերցրինք։

101. «Կրկին սով եղաւ» բառերը նշում են, որ 1758 թվից առաջ դարձյալ սով է եղել։ Այդ սովի մասին տե՛ս Հակոբ Տիվրիկցու տարեգրությունը, վերևում, էջ 450։

102. Հաջորդ բառն անընթեռնելի է։

103. Իր մի այլ հիշատակագրության մեջ Հ. Արղությանն իրեն համարում է «Նոր Նախիջևանայ հիմնադիրը», «աշխատաւորս նորաշէն քաղաքիս Նախջևանայ» (№2705, էջ 487ա)։

104. Բնագիրն այստեղ ընդհատվում է։

105. Այնուհետև բնագրում երկու աննշան վկայություն XIX դարին վերաբերվելու պատճառով բաց թողինք։

106. Տե՛ս և հմմտ. վերևում, էջ 518։

107. Տե՛ս ներքևում, էջ 585, ծանոթ. 30։

108. Այս մասում բնագիրն աղճատված է։ Ս. Անեցու ժամանակագրության շարունակողը գրում է. «Ի թվին ՊԾԲ դարձաւ յարևելս յԱղուանից և շինեաց քաղաք մի Բազաղայ անուն, և յաւուրս տօնի Հրեշտակապետացն եկն ձիւն սաստիկ ի նոր քաղաքն և սպան ի շինողացն ԴՌ (4000) անձինք, և այն ամենայն ի զինուորացն էին» (էջ 172)։ Այս հատվածում միտքը արդեն պարզ է։

109. Այս վայրի մասին հիշում է նաև Մ. Ուռհայեցին. «Արգ՝ զսա (սելջուկ Բարկիարուխի քեռին, Իսմայիլ ամիրան—Վ. Հ.) կացուցաներ Պարկիարուխն (Ռուկն-ադ-դին Աբուլ-Մուզաֆֆար Բարկիարուխ, իշխել է 1094—1104 թթ.—Վ. Հ.) զտէր Դրուց աշխարհին.....» (էջ 247)։ Իսկ Ս. Անեցու մոտ «Դրուց աշխարհի» առկա հասկացվում է կարսի շրջանը կամ պատմական Վանանդը (էջ 105)։ Եվ իսկապես, վրացերեն «կարի» նշանակում է «Դուռ». Կարս անվան ստուգաբանությունը, միջնադարում, վրացիները տալիս էին այդպես։ Ըստ երևույթին, հայ հեղինակներն իր ժամանակի վրացական ստուգաբանությունը թարգմանել են հայերեն և Կարսը (պատմական Վանանդը) կոչել «Դրուց աշխարհ»։

110. Կարապետ Ա. կեղեցին կաթողիկոս է եղել 1393—1404 թվերին և հաջորդել է Թեոդորոս Բ Կիլիկեցուն, որին սպանեցին 1392 թ. («Ազգապատում», էջ 1990), ուստի մեզ անհասկանալի է մնում, երբ Կարապետ Ա. կեղեցուն որպես նախորդ այստեղ նշվում է Դիոսկորոսը։ Ս. Անեցու ժամանակագրության շարունակության մեջ գտնում ենք նման մի հատված, սակայն Դիոսկորոսի փոխարեն այնտեղ հանդիպում ենք Թեոդորոս անվան.

«ՌՃՂԵ ի ՊԵՐ թվին զտէր Թէոդորոսն ի Սիս սպանին, և նստաւ ի տեղի նորա Բոկիկ կարապետն ամս ԺԲ» (էջ 172)։ Մեր վկայութեան մեջ խոսքն արդյոք Թեոդորոս կիլիկեցուն չի վերաբերում և Դիոսկորոսը վերջինիս երկրորդ անունն է։

111. Տե՛ս և հմմտ. Մ. Ուռհայեցի, էջ 229—230։ Ս. Անեցի, էջ 118։ Բնագրի «Ի սկիզբն շրջանի Շ (500)-եկին» արտահայտությունը ստույգ չէ։ Ավելի ճիշտ են Մ. Ուռհայեցու և Ս. Անեցու հաղորդումները, որոնք այդ դեպքերը նշում են առաջինը՝ հայոց ՇԼԳ թվականի տակ, իսկ Ս. Անեցին հայոց ՇԼԱ թվականի շարքում։ Երկու հեղինակն էլ միաժամանակ ավելացնում են. «Ցայսմ ժամանակիս» (Մ. Ուռհայեցի, էջ 229) և «Ի սոյն ժամանակիս» (Ս. Անեցի, էջ 118) արտահայտությունները, որոնք չեն նշանակում անպայման ՇԼԳ կամ ՇԼԱ, այլ այդ ժամանակներում, թերևս «ՇԼԲ» թվին։ Եւ իսկապես, տոմարական շրջանը կազմված է 532 (ՇԼԲ) տարուց։ Ուստի մեր բնագրի «Շ-եկին» պետք է ավելացնել «ԼԲ»։ որպեսզի «Իսկիզբն շրջանի» արտահայտությունը համապատասխանի «ՇԼԲ»-ին։